Աչքին բարձրանալ/ մեծանալ/ բարձր դասվել, - Բարձր կարծիք կազմել մեկի մասին: *Նրա աչքին Միհրանը հետզհետե մեծանում էր, նրա սրտի մեջ խոր համակրանք ու հիացմունք ստեղծում* (ԹՄ, 472): **Աչքում բարձրանալ/ բարձրացնել(մեկի)**, - Մեկի մոտ հեղինակությունը՝ վարկը բարձրանալ կամ բարձրացնել:

Նա չպիտի նվաստացնե՛ր իրան, այլ պիտի բարձրացնե՛ր նույնիսկ Սևադայի աչքում (ՄԳ., 128): **Աչքում զին/ արժեք ունենալ (մեկի)**, - Մեկի համար արժեք ներկայացնել, գնահատվել մեկի կողմից: *Ես, հո զիտես, կարոտ չէի այդ զարդերին և դրանք զին չունեին իմ աչքում իբրև քարեղեն* (ՄԳ., 52): **Աչքում զին ստանալ (մեկի)** - Գնահատվել, արժևորվել: *Ահա թե ինչով է պատավր զրավել երիտասարդին, - մտածեցի ես և իմ աչքում զին ստացավ տիկնոջ այդ հատկությունը* (ՀԼԴԲ, 57): **Աչքին նայել (մեկի)**, - Մեկից օրինակ վերցնել, մեկին ակնածանքով վերաբեր- վել: *Այստեղ ահա նահապետական սուրբ ավանդությունը պարզ արտափայլում է, տան նահապետն յուր լիազոր իրավունքի մեջն է, ամենքը նրա աչքին նայում, նրանից ակնածում են* (ՊՀ, 80): **Աչքին գալ**, -Աչքին երևալ, գնահատվել, ուշադրություն դարձնել, կարևորություն ունենալ: *Բայց ո՛չ երեխեքանց սուգը, ո՛չ կնանոնց լացը, ո՛չ մահն ու կյանքը էլ նրանց աչքին չեկան* (ԱՎ, 77): **Աչքին/աչքում երևալ (առվելապես հարցական և**

ժխտական), - Արժեք, կարևորություն ունենալ: *Բայց Հայաստանի հետ բաղդատելով ուրիշ տեղերը, իմ տեսած քաղաքների հայերը իմ աչքումս խորթ եղբայրներ են երևում* (ՊՀ, 360): Աչքում կշիռ/ հարգ ունենալ,- Հարգվել, գնահատվել, արժևորվել: *Ճշմարտությունը ավելի մեծ հարգ ունի իմ աչքումը, քան թե աշխարհի բոլոր թանկագին գոհարները, հարստությունքը* (ՀԼԴԲ, 58): Աչքի և գլխի վրա տեղ ունենալ, - Մեկի համար ամենապատվավոր հյուրը լինել:- *Իմ տունը ձեր տունն է, աչքիս և գլխիս վրա տեղ ունեք* (ԲԵ, IV, 179): - *Մեր գլխի, մեր աչքի վրա տեղ ունի ձեր խանը, մենք վաղուց նրա համար տեղ ենք պատրաստել տանուտերի այվանի (վերնահարկ) կտերը* (ՊՀ, 55): Աչքի խելքով (խսկց.),- Երկու աչքով նայել (շատ ուշադիր նայել),- Մի բանի կամ մեկի մասին արտաքինից դատելով: *Դրան երկու աչքով է պետք նայել, աչքից ծարիր թոցնող է* (ՀԼԴԲ, 219): Աչքը գալ, - Կարևորություն ունենալ, նշանակություն ստանալ, երևալ: Աչքին տեղ ունենալ,- Արժեք, կարևորություն ունենալ: Իր աչքից/ աչքին ընկնել/ նվաստանալ, - Ինքն իրենից զզվել, իրեն ստորացած զգալ, ինքն իր առաջ նվաստանալ: *Շատ զղջաց քննիչն յուր անխոհեմության մասին, յուր մեծահոգությունները յուր աչքին նվաստացան* (ՊՀ, 374): Այլ/ ուրիշ աչքերով նայել,- Նոր տեսանկյունով քննել, գնահատել, իր կարծիքը վերանայել, այլ կերպ վերաբերվել: *Ժամանակակից երիտասարդության արտաքին հարդարանքին այլ աչքերով պիտի նայել* (ՀԼԴԲ, 18): Ուրիշ աչքով նայել,- Ոչ բարյացակամ վերաբերվել, հետին միտք ունենալ: Աչքում զցել (մեկի), - Մեկին բամբասելով, ամբաստանելով, վատաբանելով ուրիշների մոտ վարկաբեկել: *Քեզ Միհրներսեհի աչքում զցելով նա չի հանգստանա* (ԴՎ, 297): Աչքում ընկնել/ կոտրվել (մեկի), - Հեղինակությունը՝ վարկը կորցնել: *Որքան նա հպարտ պահեց իրեն, այնքան ինքն ընկավ նրա աչքում* (ՇՔ, 284): Մի աչքով նայել, - Թերագնահատել, արժանիքը չճանաչել, կարևորություն չտալ, հաշվի չառնել, արհամարհել: *Աչքից ընկնել/ հանել/ ձգել*, - Նախկին հարգանքը չունենալ, այլևս չհարգվել, չսիրվել: *Միհրներսեհի կյանքը վտանգվեց: Նրան սպասում էր մահապատիժ:*

Նա ընկավ Հազկերտի աչքից (ԴՎ, 727): Նոր չէր, որ ՄՏ կայանի դիրեկտորն ընկել էր նրա աչքից (ԽՀ, 395): Աչքից դուրս գալ/ ելնել, - Անմիջական ուշադրությունից ելնել, նախկին հարգանքը չունենալ, աչքից ընկնել: Աչքին(բան) չերևալ, - Արժեք, կարևորություն չունենալ: - Մայր, ճշմարիտ ես ասում,- պատասխանեց որդին,- աշխարհիս փառքն ու վայելչությունը աչքիս չեն երևում (ԱԵ, 344): Խնամողի աչքով էր Պետին նախիրին նայում (ԲԵ, 54): Այս կամ այն աչքով նայել (մեկի կամ մի բանի), - Այս կամ այն չափանիշով մոտենալ մեկին կամ մի բանի: Աչքին ալարուլա երևալ (բրբ.), - Աչքին այլ կերպ երևալ, աչքին անսովոր՝ տարօրինակ երևալ: Դու ինձ մի աչքով ես նայում/ տեսնում, - Ինձ անշնորհք՝ տկար մա՞րդ ես կարծում, ինձ թերագնահատո՞ւմ ես: Աչքով դիտել/ նայել (մեկի), - Մեկի տեսակետով դիտել՝ նայել:

В глазах, – Ինչ-որ մեկի կարծիքով, պատկերացմամբ: *И наконец, что ж такое в глазах его, чтоб до такой степени смеяться надо мной?* (ДФУ, 249). Возвышать в глазах, – Ինչ-որ մեկին բարձրացնել աչքում: *Этот поступок – героический и бескорыстный – сильно возвысил его в глазах родственников* (РАФ С, 117). На глаза(х) (հնց.), – *Она на мои глаза похудела в последнее время.*

Вырастать в глазах,– Նվաճել մեկի հարգանքը, բարձրանալ աչքին: *Сейчас объясню, что вышло, но теперь хочу лишь припомнить как я вдруг ей тогда шик задал и вырос в её глазах* (ДФПо, 296). Смотреть свежими глазами,– Թարմ աչքերով նայել, նոր տեսանկյունով նայել: Смотреть/ глядеть глазами, – Մեկի ազդեցության տակ լինելով՝ նրա կարծիքն ունենալ: *Я по вашей теории знаю всё, смотрю на вещи вашими глазами: я воспитанник вашей школы, а между тем мне скучно жить, тяжело, невыносимо* (ГИО, 260). Ронять/ уронять в глазах,– Ինչ-որ մեկին զգել մեկի աչքում, նսեմացնել: *Через равные промежутки времени хозяин ударом ноги под стойкой вышибал за порог бродячую собаку, ронявшую его заведение в глазах иностранцев* (РАФ С, 118). Свет померк в глазах, - Ամեն ինչ տհաճ, տգեղ է դարձել մեկի համար: Мерить/ смерить/ смерять глазами, - Ակնդետ նայելով՝

փորձել գնահատել: *Смотреть/ глядеть другими/ иными глазами*, -
Գնահատել, վերաբերվել այլ տեսանկյունից, դիրքից: *Доктора,
жившего тут же, за перегородкой, он видел теперь чаще всех и
смотрел на него совсем другими глазами* (РАФ С, 116).

In sb's eyes, - Մեկի կարծիքով, մեկի աչքին/ աչքում: «*Such a
going-on by my sister might prejudice me in her eyes*» (САН, 65). *If that
unlucky letter has prejudiced her against him, go at once, and tell her that
he has cleared himself in your eyes and in mine* (СВВ, 133). A
jaundiced eye, - Կանխակալ, կանխահամոզված հայացք, կարծիք:
*She views the world with the jaundiced eyes of a woman who
subconsciously realizes she has missed something which means in point of
fact that she has missed everything* (ERP D, 253). Spit in sb's eye, -
Մեկին արհամարհանքով վերաբերվել: *That scoundrel spits in the eye
of the society*. Look with another eye upon sth, - Գնահատել,
վերաբերվել մի բանի այլ տեսանկյունից: See sth. with sb's eyes, - Նոր
տեսանկյունով քննել, գնահատել, իր կարծիքը կազմել ուրիշի
ազդեցության տակ: *She'd been rather nervous of the architect's plan,
then she began to see it with his eyes* (ERP D, 257). Folly is wise in her
own eyes (ասացվ.), - Ամեն հիմար խելոք է իր աչքում՝ իր կարծի-
քով: Beauty is in the eye of the gazer (ասացվ.), - Յուրաքանչյուրն ունի
իր պատկերացումը գեղեցկության մասին:

Ինչպես նկատում ենք, այս ենթադաշտի դարձվածքներն
ուսումնասիրելիս դրանցից մի քանիսը, բացի ենթադաշտին բնորոշ
ընդհանուր իմաստից, ունեն նաև մի շարք իմաստային նրբե-
րանգներ: Նախ հարկ է նշել, որ ենթադաշտի դարձվածքների շար-
քում տեղ են գտել թե՛ այնպիսիք, որ արտահայտում են դրա-
կան կարծիք, վերաբերմունք և այլն, և թե՛ այնպիսիք, որ օժտված
են բացա- սական վերաբերմունքի, կարծիքի նրբիմաստներով:
Այսպես, օրինակ՝ հայերենում և ռուսերենում առկա են «մեկի կամ
մի բանի մասին բարձր կարծիք ունենալու, նման կարծիք ստեղծե-
լու, մեկի աչքին բարձրանալու, նրա կողմից բարձր գնահատվելու»,
ինչպես նաև «որևէ մեկի մասին վատ կարծիք ունենալու, նսեմա-

նայու» իմաստային նրբերանգները (**աչքում/ աչքին բարձրանալ, աչքին զին արժեք ունենալ, իր աչքից/ աչքին ընկնել/նվաստանալ, աչքում զգել, աչքում ընկնել, աչքում կորչել, աչքից հանել, возвышать в глазах, возрастать в глазах, ронять в глазах, свет померк в глазах**): Հայերենում առկա են նաև «հարզվելու և հարզանքից զրկվելու» և «աչքում հատուկ արժեք, կարևորություն ունենալու» և այդ «արժանիքներից զրկվելու» նրբերանգները (**աչքին նայել, աչքին գալ, աչքին/ աչքում (յ)երևալ, աչքին կշիռ/ հարզ ունենալ, աչքի և գլխի վրա տեղ ունենալ, աչքը գալ, աչքին տեղ ունենալ, աչքից ընկնել, աչքից դուրս գալ**): Միայն հայերենին է բնորոշ նաև «մեկին թերագնահատելու» նրբիմաստը (**մի աչքով նայել, դու ինձ մի աչքով ես նայում/ տեսնում**):

Ենթադաշտի դարձվածքներում կարելի է նաև նկատել «կարծիքի փոփոխության, մարդկանց ու իրերին այլ տեսանկյունից նայելու, այլոց կարծիքով շարժվելու» նրբիմաստները, որ առկա են բոլոր երեք լեզուներում (**աչքում զին ստանալ, այլ/ ուրիշ աչքերով նայել, աչքով դիտել/ նայել (մեկի), смотреть свежим глазом, смотреть/ глядеть глазами, смотреть другими глазами, look with another eye, see sth. with sb's eyes**): Միայն անգլերենին է հատուկ «կանխակալ կարծիքի» և «արհամարհանքի» (**a jaundiced eye, spit in sb's eye**), իսկ հայերենին՝ «իր իսկ աչքին նվաստանալու» (**իր աչքից/ աչքին ընկնել**) իմաստային նրբերանգները:

Ենթադաշտի դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Այսպես, հայերենի և ռուսերենի դարձվածքների ճնշող մեծամասնությունը բայական երկանդամ, եռանդամ և սակավաթիվ դեպքերում քառանդամ կառույցներ են (հայերենում հարադրությունները և հարադիր բայերը դիտվել են որպես մեկ միավոր): Հայերենում առկա են նաև մեկ ածականական (**աչքի ընկնող**), մեկ մակբայական (**աչքի խելքով**) և մեկ հաղորդակցական (**դու ինձ մի աչքով ես նայում**) դարձվածքներ: Ռուսերենում բացի բայական կառույցներից կան նաև մակբայական միազագաթ կառույցներ (**в глазах, на глазах**): Ավելի բազմազան են անգլերենի

դարձվածքների կառուցվածքային տիպերը: Այստեղ հանդիպում են բայական (**spit in sb's eye, look with another eye, see sth with sb's eyes**), գոյականական (**a jaundiced eye**), մակբայական (**in sb's eyes**) և հաղորդակցական (**folly is wise in her own eyes beauty is in the eye of the gazer**) դարձվածքներ:

Դիտարկվող դաշտի դարձվածքներում գործում են անվանական և բայական քերականական կարգեր՝ առկայացման, թվի, հոլովի, դեմքի, եղանակի, ժամանակի, սեռի, հաստատական-ժխտականի: Դրանցից մի քանիսն ունեն իմաստազատիչ դեր, մյուսները զուրկ են այդ դերից: Դարձվածքների գլխավոր անդամը, շարահյուսության տեսակետից, տարբեր է՝ կախված կառուցվածքային տիպերից: Ինչ վերաբերում է գլխավոր՝ անդամին իմաստային առումով, ապա բոլոր դարձվածքների առանցքային անդամը «աչք» բաղադրիչն է: Բոլոր դարձվածքները, ըստ բաղադրիչների իմաստային միաձուլության աստիճանի, դարձվածքային սերտաճումներ և միասնություններ են՝ անօտարելի և անփոփոխելի բաղադրիչներով, այլապես դարձվածքները կզրկվեն իրենց իմաստից: Լավագույն դեպքում դրանք այլ նրբիմաստ ձեռք կբերեն: Մի դեպքում՝ հայերենի **աչքի և գլխի վրա տեղ ունենալ** դարձվածքում «գլուխ» բաղադրիչի օտարման դեպքում դարձվածքը կպահպանի իր իմաստը:

Դարձվածքների մեջ նկատելի են դարձվածքային տարբերակներ՝ **Աչքերում/ աչքերի մեջ կարդալ** (քերականական), **Աչք (ու) ունքով/ հոնքով հասկանալ/ հասկացնել** (քանակական, բառային), **Բաց աչքով/ աչքերով** (քերականական), **Աչքին բարձրանալ/ մեծանալ** (բառային), **Աչքում գին / արժեք ունենալ** (բառային), **Աչքում կշիռ / հարգ ունենալ** (բառային), **На глаз (ок)** (քերականական), **Глаза открываются/ открылись** (քերականական), **Смотреть/ глядеть глазами** (քերականական), **Мерить/ смерить/смерять глазами** (քերականական):

Այս դաշտում անգլերեն դարձվածքային տարբերակներ առկա չեն: Դաշտում տեղ են գտել նաև հումանիշային մի քանի շարքեր՝

ըստ արտահայտած նրբիմաստի՝ Աչքերով խոսել - Աչքին ունքին նայել - Աչքով ակնարկել - Աչքերը բանալ Աչքերի քողը վերցնել; Աչքերը կարդալ - Բաց աչքով - Աչքը բանալ- Աչքերը բացվել - Աչքերից կապն ընկնել; Աչքին բարձրանալ - Աչքին բարձր դասվել - Աչքին զին/ արժեք ունենալ/ ստանալ - Աչքին լավ դուրս գալ - Աչքին նշանակություն ունենալ; Աչքի(ն) գալ - Աչքին երևալ - Աչքին տեղ ունենալ; Աչքին կշիռ ունենալ - Աչքին հարգ ունենալ - Աչքի ու գլխի վրա տեղ ունենալ; Աչքում ընկնել - Աչքից ընկնել - Իր աչքում ընկնել - Աչքում կորչել - Աչքից զցել - Աչքից հանել - Աչքե ձգել; Открывать глаза - Раскрывать глаза; Видеть по глазам - Пронизывать глазами;

В глазах написано - Глаза зеркало души; Глаза открываются - Пелена падает с глаз; В глазах - На глазах; Look with another eye - See sth with sb's eyes; Folly is wise in her own eyes - Beauty is in the eye of the gazer և այլն:

Առաջին ենթադաշտում դարձվածքային հականիշներ չկան: Իսկ երկրորդում հականիշային զույգեր կարելի է նկատել՝ կախված դրական և բացասական կարծիք, վերաբերմունք արտահայտող դարձվածքների առկայությունից՝ **Աչքին բարձրանալ - Աչքից ընկնել; Աչքում զին ստանալ - Աչքում կորչել; Աչքին երևալ - Աչքին չերևալ; Աչքում բարձրանալ - Աչքում զցել; Возвышать в глазах - Ронять в глазах; Вырастать в глазах - Свет померк в глазах.**

Իմաստային այս դաշտում նկատելի են նաև մի շարք դարձվածքներ, որ ունեն իրենց համարժեքները մյուս մեկ կամ երկու լեզուներում՝ **Աչքը սրտի հայելին է - Глаза зеркало души - The eyes are the mirror of the soul; Աչքը/ աչքերը բանալ/ բացել - Открывать глаза (кому) - Open sb's eyes to sth; Աչքը/ աչքերը բացվել - Глаза открываются/ открылись; Քողը աչքերից ընկնել - Пелена падает с глаз; Աչքին բարձրանալ/ մեծանալ - Вырастать в глазах; Աչքում բարձրացնել - Возвышать в глазах; Այլ/ ուրիշ աչքերով նայել - Смотреть/ глядеть другими глазами - Look with another eye upon sth; Աչքում զցել - Ронять/ уронять в глазах.**

Ուսումնասիրված դարձվածքներն ունեն ոճական տարբեր կիրառություններ:

Դրանք հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում: Դրանցով բավականին հարուստ է նաև գեղարվեստական գրականությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիտարկված դարձվածքների մեծ մասը յուրահատուկ է այս կամ այն լեզվին: Մյուս կողմից, որոշ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող մեկ կամ երկու լեզվում: Այդ դարձվածքներն օժտված են իմաստային, կառուցվածքային, քերականական և ոճական առանձնահատկությունների ընդհանրություններով և տարբերություններով, որ վկայում են այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության մեջ առկա ընդհանրությունների և տարբերությունների մասին: Սա էլ իր հերթին նպաստում է տարբեր լեզուների համակարգերում դարձվածաբանական ընդհանրությունների բացահայտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԵՂ – Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 1990, էջ 359:
2. ԳՂ – Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., Երևանի համալս. հրատ., 1969:
3. ՊՂ – Պռոշյան Պ., Հացի խնդիր, Երևան, Հայաստան հրատ., 1968:
4. ՍԳՂ – Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1975:
5. ԲՁ – Բրունտե Շ., Ջեյն Էյր, Ե., 1988:
6. ԽՂ – Խանգաղյան Ս., Հողը, Ե., 1964:
7. ԴՎ – Դեմիրճյան Դ., Վարդանանք, Երևան, 1987:
8. ԹԱ – Թորգոմյան Ծ., Անմար կրակներ, Ե., 1959:
9. ՇԵ – Շիրվանզադե Ա., Երկերի լիակատար ժողովածու, հ.

4. Երևան, Պետ հրատ., 1930:
10. ԲԵ – Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ.4, Ե., 1983:
 11. ԲԵ – Բալունց Ա., Երկեր, «Սովետ. գրող» հրատ., 1986:
 12. ПАК – Пушкин А. С. Капитанская дочка. Л., 1949.
 13. КАС – Куприн А.И. Сочинения в 2-х томах. Т.1. М., 1981.
 14. ДФПо – Достоевский Ф.М. Повести. Бедные люди. Л., 1984.
 15. ГИО – Гончаров И. А. Обыкновенная история. М.: Худ. лит., 1968.
 16. ДФП – Достоевский Ф.М. Преступление и наказание. М., 1983.
 17. ThWV – Thackeray W. M. Vanity Fair, London, 1991.
 18. ERPD – English-Russian Phraseological Dictionary. SE, 1982.
 19. ՄԳ – Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Ե., 1957:
 20. ԱՎ – Արուսյան Խ., Վերք Հայաստանի, Ե., 1975:
 21. ՇՔ – Շիրվանզադե Ա., Քառու, Ե., 1955:
 22. ԱԵ – Աղայան Ղ., Երկեր, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1979:
 23. ДФУ – Достоевский Ф.М. Униженные и оскорбленные. Бедные люди. М., 1974.
 24. РАФС – Квеселевич Д.И. Русско-английский фразеологический словарь. М., 1998.
 25. САН – Cronin A.J. Hatter's Castle, "FL. Publ. House" М., 1963.
 26. CWW – Collins W. The Woman in White, USA, 1934.

Ключевые слова: метонимия, фразеологизм, особенность, эквивалент, общность, различие, языковое мышление.

Казарян А.З. - Фразеологизмы, выражающие восприятие, отношение и мнение в армянском, русском и английском языках. - С помощью метонимии, являющейся одним из наиболее действенных стилистических приемов, придающих речи образность, образуется множество фразеологизмов. Среди них важное место занимают фразеологизмы, включающие названия частей тела.

Целью данной статьи является исследование, анализ и сопоставление особенностей армянских, русских и английских фразеологизмов с компонентами

“глаз”, выражающих восприятие, отношение и мнение. Выявлены некоторые общие и различительные черты семантические, структурные, грамматические и стилистические особенности фразеологизмов рассмотренных языков, что указывает на общность и различие в языковом мышлении народов, говорящих на данных языках.

Keywords: metonymy, phraseological unit, peculiarity, equivalent, similarity, difference, linguistic thinking.

Ghazaryan A.Z. - Phraseological Units Expressing Perception, Attitude and Opinion in Armenian, Russian and English. - Numerous phraseological units are formed by the stylistic device metonymy which is one of the most active devices, making the speech figurative and expressive. Among these phraseological units, there are a great number of phraseological units, including names of body parts.

The goal of the article is to investigate, analyze and compare the peculiarities of the Armenian, Russian and English phraseological units with the component “eye”, expressing perception, attitude and opinion. Some similarities and differences of the mentioned peculiarities are revealed in the semantic, structural, grammatical and stylistic characteristics of the units of the languages considered, which speaks about the similarities and differences between the linguistic thinking of the people speaking the given language.

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И
ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Լ. Գ. Բրուտյան

Հիմնաբառեր: Հաճոյախոսություն, միջմշակութային հաղորդակցում, համատեքստ, խոսքային վարվելակարգ, խոսույթ:

Հաճոյախոսությունները որպէս խոսքային վարվելակարգի ձևերից մեկը, որպէս գրուցակցի հանդէպ բարեհամբույր և բարյացակամ վերաբերմունքի նշան, «սոցիալական շոյանքներ» (ըստ Ն. Ֆորմանովսկայայի¹), միևնույն ժամանակ կատարում են կարևոր հաղորդակցային կապահաստատական գործառույթ: Այսօր այլևս ապացուցման կարիք չունի այն թեզը, համաձայն որի մեր կյանքի որակը պայմանավորված է մեր հաղորդակցման որակով: Մա էլ, իր հերթին, անմիջականորեն կապված է նրա հետ, թե որքանով տեղին և պատշաճ են կիրառվում ու մեկնաբանվում խոսողական ակտերը հաղորդակիցների կողմից՝ կախված բազմապիսի հանրամշակութային գործոններից: Խոսքային բազմազան ակտերի շարքում հաճոյախոսության խոսքային ակտը զբաղեցնում է իր ուրույն, չափազանց կարևոր տեղը: Հարկ է նշել, որ հաճոյախոսություն անելիս թե՛ միևնույն լեզվամշակութային և թե՛ առավել ևս միջմշակութային հաղորդակցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել բազմապիսի գործաբանական և հանրամշակութային գործոններ, որոնք ազդում են դրա ընկալման և, հետևապէս, հաղորդակցային գործընթացի հետագա հաջողության կամ անհաջողության վրա: Հոդվածում ասվածի լույսի ներքո վերլուծվում են տարաբնույթ հաճոյախոսություններ:

¹ *Н.И.Формановская, Речевой этикет и культура общения, М., 1989, էջ 52.*

Իզական սեռի անձանց համեմատությունը արական սեռի անձանց հետ (օրինակ՝ «*Դու տղամարդ կին ես*», «*Դու տղամարդու խելք ունես*») հայկական և ռուսական լեզվամշակույթներում ընկալվում է որպես հաճոյախոսություն, թեպետ նշենք, որ կանանց մի մասը չի ընդունում նման հաճոյախոսություններ: Միննույն ժամանակ, հակառակը, այսինքն արական սեռի անձանց վարքագծի, բնավորության գծերի համեմատությունը իզական սեռի հետ (օրինակ՝ «*Դու կնոջ նման ես քեզ պահում*») ոչ միայն չի ընկալվում որպես հաճոյախոսություն, այլև կշտամբանք, բացասական գնահատական է պարունակում: Դրա հետ մեկտեղ հանդիպում են իզական սեռի անձանց վերաբերող արտահայտություններ և խոսույթներ, որտեղ զուգահեռաբար մատնանշվում են տղամարդուն և կնոջը հատուկ հատկանիշներ, և նման խոսույթներն ընկալվում են որպես հաճոյախոսություն: Այսպես, Պարույր Սևակը Սիլվա Կապուտիկյանի մասին գրել է, որ ծնողները և բնությունը օժտել են նրան կանացի և առնական գծերի հրաշալի և հազվադեպ համաձուլվածքով. նրա հոգին կանացի քնքշությամբ է պատված, իսկ սիրտը բաբախում է ուժեղ, տղամարդու սրտի նման, նրա ձայնը մեղմ է հնչում՝ կնոջ նուրբ ձայնի պես և միննույն ժամանակ տղամարդու ուժեղ շեշտադրությամբ, նրա խոսքում լսվում են մայրական մեղմ հնչերանգներ և հայրական ազդեցիկ, տիրական և հպարտ հնչյուններ, նա լաց է լինում կնոջ պես և ոգևորում ուժեղ տղամարդու նման, նրա ներքին հոգևոր կյանքը լի է հայուհուն բնորոշ խոնարհությամբ և հայի անհանգիստ որոնումներով: Հմմտ. «*երկաթե լեղի*» որակումը, որը տրվել է Մարգարետ Թետչերին:

Ինչ վերաբերում է հաճոյախոսական խոսույթում գնահատողական բառապաշարին գենդերային տարբերակումների տեսակետից, ապա նախ՝ իզական սեռի անձինք օգտագործում են ավելի հարուստ և բազմազան բառապաշար և, բացի դրանից, օգտագործում են այն տարբերակված կերպով՝ կախված իրադրության համատեքստից: Այսպես, «*գեղեցիկ*» բառը ավելի հաճախ օգտագործում են հանրամշակութային իրությունները գնահատելու համատեքստում:

տում («Ի՛նչ գեղեցիկ տուն է», «Ի՛նչ գեղեցիկ մեքենա է») և հազվադեպ՝ արտաքինը, հագուկապը գնահատելիս, կիրառելով բազմազան նրբերանգներ մատնանշող մակդիրներ («սիրունիկ», «հմայիչ», «հետաքրքիր», «ոճային» և այլն²):

Դիտարկենք այժմ **Ֆիտոնիմներ (բուսանուններ) պարունակող** հաճոյախոսությունները: Եթե հայերը երիտասարդ սլացիկ աղջկան համեմատում են չինարի, բարդու հետ, ապա ռուսական լեզվամշակույթում լավ հաճոյախոսություն է երիտասարդ աղջկան, կնոջը համեմատել կեչու հետ («*Ռու կեչու նման սլացիկ ես*»): Կեչին, ինչպես հայտնի է, Ռուսաստանի խորհրդանիշներից մեկն է, և պատահական չէ, որ արտերկրում Ռուսաստանի ապրանքանշաններից մեկը «Բերյոզկա» հայտնի պարային համույթն է, որի մասնակիցները սլացիկ երիտասարդ ռուս գեղեցկուհիներ են: Ի դեպ, Լիտվայում կնոջը կեչու հետ չեն համեմատում, քանի որ «կեչի» բառը լիտվերենում արական սեռի է:

Հայկական, ռուսական, անգլիական և շատ այլ լեզվամշակույթներում երիտասարդ կնոջը, աղջկան հասցեագրված տարածված հաճոյախոսություն է նրան համեմատել ծաղիկների թագուհու՝ վարդի հետ. «*վարդ*» բառը գուգորդություններ է առաջացնում ամենագեղեցիկի, ամենալավ հատկանիշների, ինչպես և երիտասարդության հետ: Ի դեպ, «*վարդ աղջիկ*» արտահայտությունը հենց «գեղեցիկ» նշանակությունն ունի³:

Երիտասարդ կանանց հասցեագրված համընդհանուր, ընդունված հաճոյախոսություններ են շատ տարբեր լեզվամշակույթներում «*ծաղիկ*» բառը պարունակող հաճոյախոսությունները. «*Ռու իսկական ծաղիկ ես*»: Իսկ ահա մի օրինակ, որը կարող է հանգեցնել միջմշակութային բախման. եթե ռուսերենում «*Он выглядит как огурчик*» կարող է օգտագործվել որպես հաճոյախոսություն «առողջ, թարմ, պիրկ» նշանակությամբ, ապա հայերենում (խոսակ-

² Տե՛ս *Л.Г.Брутян, Язык и гендер, Ереван, 2008, էջ 82:*

³ Տե՛ս նաև *Р.Р.Грдзелян, Слово в ореоле смысла, Ереван, 2007, էջ 74-75:*

ցական ոճում) «*խիարի պես*» արտահայտությունը, ինչպես հայտնի է, նշանակում է «լինել հիմար»:

Անցնենք **գունանուններ պարունակող** հաճոյախոսություններին, որոնք հաճախ տարբեր կերպ են ընկալվում տարբեր մշակույթներում: Հայտնի է, որ «*սպիտակ*» ածականը պարունակող արտահայտությունները շատ լեզուներում ունեն դրական հարանշանակություններ: Օրինակ, «*Դու սպիտակ մարդ ես*» արտահայտությունը մատնանշում է պարկեշտություն, ազնվություն, բարեկրթություն, սակայն ասիական երկրներում, որտեղ սպիտակ գույնը, ինչպես հայտնի է, ասոցացվում է սգո հետ, բացասական հարանշանակությունների հետ, նման հաճոյախոսությունները անհնարին են: Չինաստանում, օրինակ, «*Դու սպիտակ մարդ ես*» ամեննին հաճոյախոսություն չէ, այլ նշանակում է 1) “անգրագետ, հասարակ (բառի նվաստական իմաստով) մարդ”, 2) “ապուշ”⁴: «*Ինչ սպիտակամաշկ ես*» արտահայտությունն ընկալվում է որպես հաճոյախոսություն հիմնականում թուխ հայերի շրջանում, այնինչ սլավոնական ժողովուրդների մոտ, որոնք մեծամասամբ բաց գույնի մաշկ ունեն, նման արտահայտությունը չունի հաճոյախոսության ուժ: «*Որքա՛ն գեղեցիկ են որդուդ կապույտ աչքերը*» լավ հաճոյախոսություն է, օրինակ, սլավոնական ազգությունների անձանց համար, սակայն այդ նույն արտահայտությունը կարող է տարակուսանք և անգամ մշակութային շոկ առաջացնել արաբական աշխարհի ներկայացուցիչների մոտ: Դրա պատճառն այն է, որ աչքերի կապույտ գույնը արաբներն ընկալում են որպես վատ մարդու, նաև խաբեության և խարդավանքի նշան: Բացի այդ, պատմականորեն հենց «կապուտաչյա» մարդիկ են եղել արաբների հիմնական հակառակորդները⁵: «*Ինչպիսի՛ կանաչ աչքեր ունես*» ասույթը նույնպես ոչ բոլոր լեզվամշակույթներում է ընկալվում որպես հաճոյախոսություն: Ինչպես Ս. Գ. Տեր-Մինասովան է նշում, ռուսերեն «*зеленые глаза*» («*կանաչ աչքեր*») արտահայտությունը բանաստեղ-

⁴ Տե՛ս *С.Г. Тер-Минасова, Война и мир языков и культур, М., 2008, էջ 159:*

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 56:

ծական, ռոմանտիկ հնչեղություն ունի և հուշում է կախարդական, ջրահարսի աչքերի մասին: Այնինչ անգլերեն նույն *“green eyes”* բառակապակցությունը նախանձի փոխաբերական արտահայտությունն է, բացասական հարանշանակություն ունեցող մի արտահայտություն: Բացասական գուգորդությունները Շեքսպիրի «մեղքն են», որը «Օթելլո»-ում նախանձը, խանդը անվանել է *“a green-eyed monster”* («կանաչաչյա հրեշ»)⁶: Հետևապես, «կանաչ աչքեր» արտահայտությունը տարբեր լեզվամշակույթներում (մասնավորապես, ռուսական և անգլիական) կարող է հանգեցնել մշակութային բախման: Նշենք նաև «*ոսկե*» գունանունը, որը տարբեր խոսույթներում օգտագործվում է որպես հաճոյախոսություն. «*Ռու ոսկե ձեռքեր (սիրտ) ունես*»:

Դիտարկենք **կենդանանիշ բառեր պարունակող** հաճոյախոսությունները միջմշակութային հաղորդակցման համատեքստում: Քանի որ միևնույն կենդանանիշ բառն արտացոլում է այս կամ այն լեզվամշակույթի լեզվակիրների աշխարհընկալման առանձնահատկությունները, նման հաճոյախոսությունները տարբեր կերպ են ընկալվում և մեկնաբանվում տարբեր լեզուներում. հաճախ այն, ինչ հաճոյախոսություն է համարվում մեկ մշակութային, կարող է միանգամայն անհասկանալի, նույնիսկ վիրավորական լինել մեկ ուրիշում: Ըստ Ի. Ն. Գորելովի և Կ. Ֆ. Սեդովի՝ «այլ մշակույթի կրողների վրա շատ տարօրինակ տպավորություն կարող են թողնել կանանց հասցեին արվող որոշ հաճոյախոսություններ: Հնդկաստանում կնոջը կարելի է հաճոյանալ՝ նրան համեմատելով կովի հետ, իսկ նրա քայլվածքը՝ փղի քայլվածքի հետ»⁷: Ստորև բերենք միջմշակութային բախման մի օրինակ: Հնդիկ ուսանողները իրենց ռուս դասախոսին մի անգամ ասացին. «*Ռուք փղի պես եք քայլում*»: Ռուս կինը, որի համար փղի քայլվածքը գուգորդություններ է առաջացնում ծանրության, անճոռնի քայլվածքի հետ, խիստ վիրավորվել էր, այնինչ ուսանողները իրեն հաճոյախոսել էին,

⁶ С.Г.Тер-Минасова, Язык и межкультурная коммуникация, М., 2008, էջ 53-54:

⁷ И.Н.Горелов, К.Ф.Седов, Основы психолингвистики, М., 2005, էջ 132.

նկատի ունենալով փոյի քայլվածքի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են սահունությունը, սեփական արժանապատվությունը, ինքնավստահությունը⁸:

Հայկական և ռուսական մշակույթներում ոչխարը դրական զգացմունքներ և զուգորդություններ ամեննին չի առաջացնում, քանի որ ընկալվում է որպես բթության, նախիրի հետևից տխմարաբար և հնազանդորեն հետևող: Հետևապես, նշված լեզվամշակույթներում մարդուն «ոչխար» անվանելը վիրավորանք է և ոչ թե հաճոյախոսություն: Այնինչ Չինաստանում մարդուն, սովորաբար կնոջը, այդպես անվանելը լավ հաճոյախոսություն է, քանի որ չինական մշակույթում, հետևապես, լեզվում այդ կենդանին գեղեցկության և կատարելության խորհրդանիշ է, այն մարմնավորում է լավագույն առաքինությունները. բարությունը, համեստությունը, անձնուրացությունը, կոլեկտիվիզմը⁹:

Օձը թե՛ հայկական, թե՛ ռուսական լեզվամտածողության համար «խայթող», «կծու», «թունոտ» հատկանիշների մարմնավորում է («Նա օձ է», ասում ենք), թեև բառն ունի նաև դրական հարանշանակություններ («Օձի խելք ունենալ»): Իսկ ճապոնիայում, ուր օձը մարմնավորում է միայն դրական հատկանիշներ, այդ թվում նրբագեղություն, նրբաճաշակություն, կնոջն հասցեագրված լավ հաճոյախոսություն է համեմատությունը օձի հետ. «գեղեցկուհի օձ»: Ռուսական մշակույթում «Гусыня» («սագ») դիմելաձևը վիրավորանք է կնոջ համար: Եզիպտոսում դա քնքուշ հաճոյախոսություն է¹⁰:

«Սոխակի պես ես երգում» տարածված հաճոյախոսություն է շատ լեզվամշակույթներում, այդ թվում հայկական և ռուսական, և պատահական չէ, որ հայ մեծ երգչուհի Գոհար Գասպարյանին անվանել են «հայկական սոխակ»: «Ի՛նչ ծիտ ես» հայ երիտասարդների

⁸ Տե՛ս *Д.Б.Гудков*, Теория и практика межкультурной коммуникации, М., 2003, էջ 147:

⁹ Տե՛ս *С.Г.Тер-Минасова*, Война и мир языков и культур, էջ 152:

¹⁰ *И.Н.Горелов, К.Ф.Седов*, նշվ. աշխ., էջ 132:

Ժարգոնում ընդունված հաճոյախոսություն է՝ հասցեագրված երիտասարդ աղջկան, կնոջը: Այն, սակայն, կարող է չընկալվել որպես այդպիսին այլ լեզվամշակույթներում: Հայաստանում տղամարդու համար հաճոյախոսություն կարող է լինել նրան առյուծի, արծվի հետ համեմատելը: Երեխային փաղաքշորեն անվանում են գառնուկ, իսկ ջեյրանի հետ համեմատությունը հաճոյախոսություն է կնոջը:

Շատ լեզվամշակույթներում որպես հաճոյախոսություն օգտագործվում են համեմատությունները երկնային մարմինների, մասնավորապես, արևի հետ: «*Ռու արև էս*» գովասանական խոսքերը ուղղված են լինում իր շուրջը լույս սփռող մարդուն հայկական, ռուսական և մի շարք այլ լեզվամշակույթներում: Սակայն միջինասիական և այն երկրներում, որտեղ կիզիչ արևը տարվա շոգ եղանակին չափազանց մեծ անհարմարություններ է բերում, հաճոյախոսություններում օգտագործվում է համեմատություն ոչ թե արևի, այլ լուսնի հետ: Ուզբեկ գրող Տիմուր Պուլատովը հետևյալ կերպ է խոսում տարբեր լեզուներում «*արև*» բառի հուզարտահայտչական երանգավորման, պատկերավորության մասին. «Ռուսերեն «արևը» («солнце») բոլորովին այն չէ, ինչ ուզբեկերեն «кыям»-ը և միանգամայն այլ է, ինչ տաջիկերեն «офтоб»-ը: Ինչպիսի հարաբերությունների՝ ընկերական կամ կաշկանդող, մեջ էր մտնում մարդը երկնային լուսատուների հետ, այդպես էլ դրանք արտահայտել ու արտաբերել է լեզուն: Չէ՞ որ կյանքի մեծ մասը արևի այրող ճառագայթների տակ ապրած ուզբեկը երբեք չի ասի փաղաքշական «солнышко», ճիշտ այնպես, ինչպես ռուս մարդը չի ունենա այնպիսի զգացողություն, որ արևը կարող է լինել ոչ միայն պտղաբեր և հողին նոր կյանք տվող, այլև թշնամական: Փոխարենը լուսնի՝ գիշերային այդ լուսատուի նկատմամբ, որը զովություն ու հանգստություն է բերում, ուզբեկը բոլորովին այլ վերաբերմունք ունի. գեղեցիկ ու ցանկալի ամեն բան նա կոչում է *լուսնադեմ*, *լուսնանման*՝ այն էլ

այնպիսի առողջանությանը, որ ռուս մարդու ականջին դա առնվազն վերամբարձ կթվա»¹¹:

Հաճոյախոսական խոսույթը կարող է տարբեր լեզվամշակույթներում ընկալվել տարբեր ձևով՝ կախված միևնույն հասկացության հանրամշակութային տարբեր ընկալումներից, համարժեք նշանակությամբ բառերի տարբերակումներից: Այսպես, հայկական և ռուսական լեզվամտածողության համար ընկերությունը, բարեկամությունը կարևորագույն արժեքներից է, որը ենթադրում է չափազանց խորը կապ և նվիրվածություն, այնինչ ամերիկացիների մոտ ընկերության, ընկերոջ հանդեպ վերաբերմունքն այլ է. այն չի ենթադրում մեծ և խորը կապվածություն և անգամ զոհաբերություն: Դա է պատճառը, որ «*Ռու լավ ընկեր էս*» խոսույթը՝ արտաբերված հայի կամ ռուսի կողմից համարժեք չէ այդպիսի հաճոյախոսությանը, որը հնչում է ամերիկացու կողմից:

«*Ինչքա՛ն խելոք էս*» հաճոյախոսությունը՝ հասցեագրված հային, ռուսին, եվրոպացուն ենթադրում է, նախևառաջ, ինտելեկտ, խելք, գիտելիքներ, կրթվածություն հնարավոր ձախորդության, մարդկանց հետ շփման անկարողության հետ մեկտեղ: Մինչդեռ ամերիկյան մշակույթների մեծ մասում խելքը, խելացի լինելը ենթադրում է հաջողակ լինելը, ընդ որում, առաջին հերթին սոցիալական հարաբերություններում, մարդկանց լավ ճանաչելը, նրանց հետ ընդհանուր լեզու գտնելը: Ճապոնացիների համար ինտելեկտի կարևորագույն չափանիշ են համարվում սոցիալական ունակությունները: Չինացիների կարծիքով, խելացի մարդը սոցիալական կողմնորոշում ունեցող, գործունյա և պատասխանատու մարդն է: «Ինտելեկտ, խելք» հասկացությունը վերջինների մոտ ենթադրում է զգուշավորություն, հետևելու, դիտարկելու և ընդօրինակելու ունակություն: Նրանք կասկածանքով են վերաբերվում նորը ճանաչելու հակվածություն ունեցող, հետաքրքրասեր և քննադատորեն տրամադրված մարդու մտավոր ունակություններին¹²:

¹¹ Тимур Пулатов, Язык, автор, жизнь//Литературное обозрение, 1976, в. 8, էջ 109:

¹² См. u С.Г.Тер-Минасова, Война и мир языков и культур, էջ 56-57:

Հարստությունը Արևմուտքում (մանավանդ, ԱՄՆ-ում) և, օրինակ, Հայաստանում և Ռուսաստանում տարբեր կերպ է ընկալվում: Եթե ամերիկացիների համար հարուստ լինելը նշանակում է հաջողակ լինել (ինչն այնտեղ ամենագլխավոր արժեքն է), լինել խելացի, ապա հայերի, ռուսների համար հարուստ լինելը նշանակում է լինել անազնիվ, խարդախ, ագահ: Հետևապես, «*Դու մեծ հարստություն ես ձեռք բերել*», «*Որքա՛ն հարուստ տուն ունես*» արտահայտությունները հաճոյախոսություններ են Արևմուտքում, ԱՄՆ-ում, սակայն ոչ նշված երկրներում: Եվս մեկ օրինակ. «*Ես հիանում եմ քեզանով. դու այնքան համեստ ես*» ասույթը հաճոյախոսություն է կոլեկտիվիստական հասարակություններում, որտեղ համեստությունը չափազանց գովելի հատկություն է, որտեղ ընդունված չէ ի ցույց դնել սեփական արժանիքները և խոսել սեփական հաջողությունների մասին: Ի հակադրություն դրան, անհատապաշտական հասարակություններում դրանք ամենևին գովասանքի խոսքեր չեն, քանի որ, ինչպես հայտնի է, այնտեղ ընդունված բան է խոսել սեփական արժանիքների, ձեռքբերումների, հաջողությունների մասին, «վաճառել իրենց»: Պետք է նկատել, այնուամենայնիվ, որ այսօր կոլեկտիվիստական հասարակություններում դիտվում է համեստության ընկալման և գնահատման փոփոխություն գլոբալացման երևույթի ազդեցությամբ: Եվ այնտեղ արդեն բավականին հաճախ երիտասարդների հաղորդակցային վարքագծում հանդիպում է համեստության բացասական գնահատական:

Ամփոփելով, եզրակացնենք, որ միմիայն բազմապիսի գործաբանական և հանրամշակութային գործոնների հաշվարկումով կարելի է խոսել արդյունավետ հաճոյախոսության մասին, որը կարող է ճիշտ ընկալվել հասցեատիրոջ կողմից, ինչը, իր հերթին, կարող է նպաստել ներդաշնակ միջմշակութային հաղորդակցմանը:

Ключевые слова: комплимент, межкультурная коммуникация, контекст, речевой этикет, дискурс.

Брутян Л.Г. - Compliments in the context of intercultural communication. - В статье анализируются разные типы комплиментов, являющихся одним из видов речевого этикета и выполняющих одновременно важную коммуникативную контактоустанавливающую функцию. Показывается, что при межкультурной коммуникации необходим учёт разнообразных прагма-и-социокультурных факторов, влияющих на адекватное восприятие комплиментов и, как следствие, успешность/неуспешность процесса коммуникации.

Keywords: compliment, intercultural communication, context, verbal etiquette, discourse.

Brutian L. G. - Compliments in the Context of Intercultural Communication. - In the paper, different types of compliments, one of the kinds of speech etiquette which have at the same time an important communicative contact-establishing function, are analysed. It is shown that in the process of intercultural communication it is necessary to take into account various pragma- and sociocultural factors that affect the adequate perception of compliments, hence, the success/failure of the communication process.

**ՁԵՌԱԳԻՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ «ԼՈՒԾՍՈՒՆՔԻ»
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ԺԵ. ԴԱՐ)**

Բանասիր. գիտ. թեկնածու Տ. Ղ. Միրունյան

Հիմնաբառեր: Ձեռագիր, Առաքել Սյունեցի, քերականություն, Մատենադարան, ձեռագիր քերականություն:

Ձեռագրագիտական տեղեկություններ

Աշխատությունը Երևանի Մատենադարանում պահվում է երեք ձեռագրերում՝ ՄՄ 55, 1931, 4132: Առաջինը՝ ՄՄ 55-ը, քերականական և աստվածաբանական նյութերի ժողովածու է՝ գրված 1489 թ. Երզնկայի Սուրբ Հակոբ վանքում: ՄՄ 1931 և ՄՄ 4132 ձեռագրերի գրչության ժամանակի և վայրի մասին ստույգ տեղեկություններ չկան, թվագրվում են ԺԵ. դարով՝ ըստ արտաքին հատկանիշների (գրատեսակ, գրանյութ). Սրանք ևս ժողովածուներ են՝ բաղկացած տարբեր նյութերից: Քերականական երկն ունի «Լուծմունք յաղագս քերականութեան» կամ «Յաղագս քերականութեան լուծմունք» խորագրերը, հեղինակն անհայտ է: ՄՄ 55 ձեռագրի քերականության վերջին հատվածը (սկսած մակբայից) պակասում է, մյուս երկու բնագրերն ամբողջական են և միանգամայն նույնը: Ուսումնասիրության համար ընտրվել է ՄՄ 1931 ձեռագիրը՝ հաշվի առնելով, որ գրությունն ավելի հստակ է և ճշգրիտ. ըստ անհրաժեշտության մյուս ձեռագրերի հետ կատարվել են համեմատություններ:

* * *

Այս քերականությունը կառուցված է ավանդական գլխակարգությամբ, պարունակում է Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանչից (այսուհետև՝ Թարգմանիչ) և առաջին մեկնիչներից ավանդված մասերը (ինչպես՝ «Նախերգանը», որ կիրառության մեջ

է Դավիթ քերականից սկսած)¹: Բուն աշխատանքը, չնայած բոլոր ենթավերնագրերի առկայությանը, չունի նույնչափ հետևողական բովանդակություն:

«Նախերգանք» կազմված է Առաքել Սյունեցու քերականության առաջաբանի ազատ խմբագրությամբ², ընտրովի հատվածները, սակայն, ճշտությամբ չեն արտացոլում սկզբնաղբյուր շարադրանքի հաջորդականությունը. Քերականության մասին Սյունեցու հիշատակած 12 դիտարկումներից ընտրվել են մի քանիսը՝ 4-րդը, 11-րդը, ապա 8-րդը³, այդպիսով՝ նաև խախտվել է շարադրանքի տրամաբանությունը, հեղինակը նախ տալիս է Դիոնիսիոսի քերականության ավանդման պատմությունը, թե ինչպես բազում գրվածքներից պահպանվեց միայն նրա երկը, իսկ հայ մեկնիչներին հիշում է քերականության օգտակարությունը պարզաբանելուց հետո:

Հմմտ.՝ «Գրականութեան արուեստս ասեն, թէ բազումք են արարեալ, բայց անուանի Հոմերոս եւ Իսիդորոս են արարեալ, յետ նոցա այլք բազումք են արարեալ անթիւ, զոր Հերոդիանոս որդի Ապողինարի՝ իշխան, զամենայն գրեալսն ցրուեաց, միայն այս մնաց ի Դիոնէսի[ոս] ասացեալ, որ էր կռապաշտ իմաստասէր» (ՄՄ 1931, 89ա):- «Չորրորդ՝ թէ ո՞վ ոք էր սահմանող քերականութեանն: Ա՛յս է. զի քերականութեան արհեստս նախ Հոմերոս եւ Իսիդորոս

¹ Քննարկվող քերականության կառուցվածքն՝ ըստ մասերի. [«Նախերգանք»], [«Յաղագս քերականութեան»], «Յաղագս վերձանութեան քերդած», «Յաղագս ոլորակի», «Յաղագս կիտից», «Յաղագս հագներգութեան», «Յաղագս տառից», «Յաղագս վանգի», «Յաղագս յերկար փաղառութեան», «Յաղագս սուղ փաղառութեան», «Յաղագս շաղաշարաց», «Յաղագս բառի», «Յաղագս բանի», «Յաղագս անուան», «Յաղագս բայի», «Յաղագս լծորդութեան», «Յաղագս ընդունելութեան եւ յաղագս ի յօր», «Յաղագս դերանուան», «Յաղագս նախադրութեան», «Յաղագս մակբայի», «Յաղագս շաղկապի», «Յաղագս առոգանութեան», «Յաղագս ոտին»:

² Այս մասին տե՛ս նաև Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954, էջ 350-51:

³ Սրանք ձևակերպել են նախորդ քերականները, տե՛ս Գ. Ջահուկյան, «Դավիթ քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը» // «Բանբեր Մատենադարանի», N 3, Երևան, 1956, էջ 246: Յովհաննէս Երզնկացի, Հուսարումն մեկնութեան քերականի, Լոս Անճելըս, 1983, էջ 89-99: Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, Ե., 1966, էջ 55-61 ևն. նրանց հաղորդած տեղեկությունները 12 կետի մեջ ամփոփել է Առաքել Սյունեցին:

հոչակաւոր իմաստասէրք. նոքա արարին զքերականութիւնս որ ի շորիշ, եւ ո՛չ ՚ի միասին: Եւ յետ նոցա բազում ք արարին յինքեանց քերականութիւն, եւ ի յոյժ բազութենէն խառնեալ՝ ոչ գիտէին, թէ ո՛ր՝ յորոց է ասացեալ,- մինչեւ ի ժամանակս քրիստոնէութեան որդին Ապողինարի Հերովդիանոս անուն իմաստասէր եւ իշխան: Նա ժողովեաց զամենայն գրեանսն քերականութեան եւ արեաց եւ կորոյս եւ միայն եթող զԴիոնի[սի]ոսին Թրակացոյ, որ էր կռապաշտ իմաստասէր...»⁴:

«Իսկ քերականաւ գուտ է, որ զլեզուն դորդ պահէ, որ ծոփոչ, եւ զընթեռնուլն, որ զգիր քնքերական արուեստիւ առոգանութեամբ գիտենայ կարդալ, և զգիրն արուեստիւ գիտենայ գրել, թէ յորտե՞ղ պիտի դնել շեշտ, բուր, պարոյկ, ենթամնայ եւ այլն» (անդ):- «Մետասաներորդ՝ եթէ առ ի՞նչ աւգտակարութիւն էս ապիտանացու: Դարձեալ՝ աւգուտ է, որ զլեզուն ուղղորդ պահէ, որ ծոփ ոչ: Եւ զընթեռնուլն, որ զգիրքն քերական արուեստիւ ն առոգանութեամբ գիտենայ կարդալ եւ զգիրն արուեստիւ գիտենայ գրել, թէ որտե՞ղ պիտի դնել շեշտ եւ բուր եւ պարոյկ եւ ենթամնայ եւ այլն»⁵:

«Իսկ մեկնեալ է զքերականութիւնս Դաւիթ փիլիսոփայն, որ եւ թարգմանեալ է, իսկ յետ նորա Գրիգոր Մաքիստոս՝ արձակ, և յետ նորա Պլուզ վարդապետն կարճեցուցեալ է, և յետ նորա Եսաի վարդապետն, իսկ յետ նորա այլ կարճ Ծործորեցի Յովհաննէս վարդապետն» (անդ):- «Ութերորդ՝ թէ յումե՞ թարգմանեցաւ և ո՞վ էր, որ մեկնութիւն արար սորա, այսինքն՝ զի Դաւիթ փիլիսոփայն թարգմանեաց եւ մեկնեաց զսա: Իսկ յետ նորա Գրիգոր Մագիստրոս այլ ընդարձակ մեկնեաց զԴաւթի մեկնեալն: Իսկ յետոյ Յովհաննէս վարդապետն մականուն Պլուզ համառատեաց զնոյն վասն դիւրալուր լինելոյ: Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գլաձորոյ այ

⁴ *Առաքել Միւնեցի*, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, Լոս Անճելոս, 1982, էջ 71: Աբողինարի որդի Հերովդիանոսի մասին հիշատակությունը որոշ աղճատմամբ վերցված է Դավիթ Քերականից, տե՛ս Գ. *Ջահուկյան*, անդ, էջ 246:

⁵ *Առաքել Միւնեցի*, անդ, էջ 74:

լիամառատեաց գնոյն, որ այժմս կայ ի միջի, այսպէս եւ Օործորեցին է համառատեալ»⁶:

Այնուհետև ներածական այլ տեղեկություններ հաղորդվում են, կարելի էասել, տարերային կերպով՝ առանց թեմաների որոշակի կարգավորության, այսպէս, մարդու՝ մարմին և հոգի բաղկացության համաբանությամբ բանը դիտվում է իբրև «ներտրամադրեալ և յառաջաբերական» (ներքին և արտաբերական)⁷, ապա անմիջապէս անդրադարձ է արվում ստուգաբանությանը, նշվում, որ «ի յամենայն ազգ լեզու չառնու ստուգաբանութիւն», իսկ «քաղդիացիքն գիտէին և այլն, որ ուսան: Չայնակից և քմակից գրեր՝ հաց պիտի ասել խաց ասեն և այլն» (անդ): Մա, ըստ երևութին, քերականական տարբեր տեքստերից քաղված միտք է. քաղդեացիները, որոնց կարծես ընծայվում է լծորդ հնչյունների իմացություն, ըստ Հովհաննես Երզնկացու՝ առաջիններից էին, որ ստեղծեցին ինքնուրույն գիր⁸, իսկ *h-hu* ուղղախոսական շեղումը հիշատակել է Գրիգոր Մագիստրոսը այլ առիթով՝ նկատի ունենալով բարբառային թյուրացած ձևերը, որոնք հղկելու է կոչված քերականությունը⁹:

Քերականության ըմբռնումը հիմնված է Թարգմանչի հաղորդած նախնական գիտելիքի վրա¹⁰՝ «Քերականութիւն է հմտութիւն» (անդ, 89բ), բայց նաև չի անտեսված բանականության դերը: Հեղինակը հմտությունը հավասարեցրել է ուսմանը, այդպիսով՝ կարծես նաև տեղ տալով քերականության բանական հիմունքին՝ այն, ինչ պակասում էր Թարգմանչի տեքստում և հաստատվել էր դեռևս առաջին մեկնիչների կողմից¹¹. «Հմտութիւնն ուսումն է, որ ի կարդալոյն և ի գրելոյն յառաջ գայ, որ քերդողութիւնքն՝ տաղ, ոտանա-

⁶ *Առաքել Միւնեցի*, անդ, էջ 73:

⁷ Հմմտ.՝ անդ, էջ 181:

⁸ Տե՛ս *Յովհաննէս Երզնկացի*, անդ, էջ 90:

⁹ Տե՛ս *Ն. Աղոնց*, Երկեր, հ. Գ, *Գրիգոր Մագիստրոս*, Մեկնութիւն քերականին, Ե., 2008, էջ 224. Ուղղախոսական այս դիտողությունը կրկնում են հետագա այլ քերականներ (Հովհաննէս Երզնկացի, Եսայի Նչեցի ևն):

¹⁰ Տե՛ս *Ն. Աղոնց*, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 1:

¹¹ Տե՛ս Գ. *Ջահուկյան*, անդ, էջ 246-47: *Ն. Աղոնց*, անդ, Մովսէս Քերդողի մեկնութիւն քերականին, էջ 159:

ւորք, գիրք շինեալ և այլ ստեղծուած, որ իմաստունք առնեն, այս-
ինքն՝ քերական և այլ հին պատմութիւն և շարագրութիւնք կար-
դացեալ և հմտացեալ, կարեն զամենայն բան պատասխանել» (անդ):

Քերականությանը հատկացված մասերի նկարագրության մեջ
հեղինակը առասպելների տեսակները ներկայացնում է՝ ըստ Ստե-
փանոս Սյունեցու, այսինքն՝ «պիտակ» կամ սուտ, պարսավական և
փոխաբերական, բայց նաև ընդարձակում է նյութը և պատմում այն
գրույցներն ու առակները, որոնք միայն անվանապես էր հիշել Սյու-
նեցին¹²:

Հմտ.՝ «Փոխարկութեան, որ խրատէ աւգուտ, որ զայլ կեն-
դանեաց բարք, ի վերայ իւրոց փոխեն օգտին, որպէս նապաստակքն
ասացին, թէ ամէն կենդանի մեզ թշնամի է՝ մարդ, շուն, և այլ, գնա-
ցին, որ ի ծովն ընկնէին, տեսան գորտներն յեզերէն ի ծովն թափե-
ցան, զմիմիեանս յորդորեցին և դարձան, թէ քան զմեզ այլ վախ-
[կոտ] կենդանի կայ: Նմանապէս դու գյուսահատեալ մարդն ի մե-
դաց յոյս դիր և շատ օրինակ բեր և խրատ տուր ի գրոց և փոխէ ի
բարին: Կապիք՝ մեմուն. մարդ գնաց ի մայրին, բազում մանր կօշիկ
կամ գտակ հետ իւրն, նոքա փախան, ի ծառն ելան, մարդն զիւր կօ-
շիկն հագաւ կամ ի գլուխն եղ և թագեաւ, նոքա ի վայր եկին, ամէն
կօշիկ հագան և ի գլուխն եղին, ի վերայ վագեաց և զամէնն բռնեաց:
Նմանապէս դու զմեղաւորն բազում և զանազան կերպիւ խրատէ,
մինչ ի բարին կալնուս և փոխես: Գայլերն ասացին առ ոչխարն, թէ
շունն ու հովին ի միջի չէր, մեք ու դուք հաշտ [է]ինք, զնոքա ի վեր
կալէք, որ մեք ու դուք սիրելի և աղբեր լինինք, յօրժամ արարին,
զամենայն կերան: Նմանապէս հերձուածողք կամ այլ չար ոք զքեզ
խաբէ ոչ:» (անդ):

«Իսկ ըստ փոխաբերութեանն՝ խրատուց արինակք, որպէս
նապաստակացն եւ գորտուցն եւ կամ կապկացն եւ կամ գայլոցն եւ
ոչխարացն»¹³:

¹² Այս մասին տե՛ս նաև *Գ. Ջահուկյան*, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954, էջ 351:

¹³ Ն. *Աղոնց*, անդ, Ստեփաննոսի Սիւնեցոյ մեկնութիւն քերականին, էջ 187:

«Լեզուաց. .. առձեռն բացատրութեան»¹⁴ պահանջը քերականը մեկնաբանում է՝ դարձյալ հետևելով Առաքել Սյունեցուն. «Աւգտակար է, որ մարդ զամենայն ազգ լեզու գիտէ, և առաւել, որ զհայ ազգիս զանազան լեզուն» (անդ, 89բ- 90ա)¹⁵: Նույն աղբյուրից է ընդօրինակված նաև բարբառային խմբերի նկարագրությունը, սակայն փոքր-ինչ փոփոխված աշխարհագրությամբ (անդ, 90ա): Ինչպես հայտնի է, բարբառների դասակարգման առաջին փորձը պատկանում է Ստեփանոս Սյունեցուն, որը բարբառները բաժանել էր ուստանիկ կամ միջերկրյա և եզերական խմբերի, հետագայում Առաքել Սյունեցին փորձել էր պարզաբանել եզերականների տեղադրությունը¹⁶: «Լուծմունք»-ի հեղինակը, հիմնականում կրկնելով Առաքելի տվյալները, որոշ ինքնուրույնություն է ցուցաբերում. նա չի հիշատակում եզերական բարբառների, այսպես կոչված, 7-րդ՝ «Արցախային» խումբը, փոխարենը՝ Սյունիքից հետո թվարկում է ներքին տեղանուններ՝ «Վայու ձոր, Տաթեւ եւ այլն», ապա նաև՝ նշում հիշյալ աղբյուրներում բացակայող «Արցխէ քաղաքը» և «Վրաց տունը» (անդ):

Վերծանության բաժինը ևս կառուցված է Առաքել Սյունեցու քերականության հիմքով՝ տեղ-տեղ բառացի ընդօրինակությամբ, այսպես՝ «Դավթյան քերթության» պատասխկը՝ իբրև «քաջուլորակ»՝ հարուստ ելևէջներով բանաստեղծության նմուշ, քերականը մեկնել է նույնությամբ՝ որոշ ազատություն թույլ տալով միայն բառընտրության մեջ¹⁷ (օրինակ՝ պարզեցված է վիպերգության հերոսուհու արժանիքների նկարագրությունը՝ «զկինն ողջամիտ էր, չէր բոզ, աշխարհաշէն, տնաշէն» (անդ, 90բ), փխ.՝ «էր խիստ պատշաճաւոր, շինարար և ողջամիտ կին»¹⁸ և այլն):

Առոգանության նշանների՝ ոլորակի և կետի մասին հիմնականում հաղորդվում են հայտնի տեղեկություններ, ինչպես օրինակ՝

¹⁴ Ն. Արմնց, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 1:

¹⁵ Հմմտ. *Առաքել Սիւնեցի*, անդ, էջ 81-82:

¹⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, անդ, էջ 181, 306:

¹⁷ Տե՛ս նաև անդ, էջ 350-51:

¹⁸ Հմմտ. *Առաքել Սիւնեցի*, անդ, էջ 89:

շեշտի և հարաշեշտի զանազանումը հունարենի հետևողությամբ (91ա), որ կարող է վերագրվել այս կամ այն քերականին: Կետադրական նշանների հարուցած դադարները հեղինակը որոշել է շնչի տևողությամբ, ըստ այդմ՝ ստորակետը պահանջում է փոքր շունչ առնել, միջակետը՝ հոգի առնել (անդ). Սրանք կարելի է համարել նախորդ քերականների տված բնութագրումների ինքնուրույն ամփոփում (հմմտ.՝ Անանուն Մեկնիչ. «միջակետն կոչի նշան ոգի սակս ընդունելոյ»¹⁹):

«Հագներգության» վերաբերյալ (տաղ, բանաստեղծություն) Առաքել Սյունեցու հինգ մեկնաբանություններից քերականը ընտրել է երկուսը՝ այսպես կոչված՝ «կատակերգությունը» և «գավազաներգությունը»: Առաջինը թվում է սխալագրության հետևանք, դեռևս Թարգմանիչը հագներգությունը դիտել է կարկատուն խոսք²⁰, որից էլ «կարկատերգություն»²¹: Մեկնողական գրականության մեջ «կատակերգություն» եզրույթը կայունացած չէ և նաև չունի որոշակի ըմբռնում. Եսայի Նչեցին թեև գործածում է այն, սակայն հավատարիմ մնալով Թարգմանից ավանդված նշանակությանը՝ բացատրում է իբրև «կարկատուն բանք»²², Առաքել Սյունեցին խորացնում է խզումը հին ու հետագա ըմբռնումների միջև և եզրույթը բացատրում «որպես կատակն, որ զբանն հեզնեն եւ ծաղր առնեն զմարդ»²³, այս մեկնաբանությունը կրկնում է նաև մեր քննության առարկա քերականության հեղինակը (անդ, 91ա): Հաջորդ «գավազաներգությունը», ըստ Թարգմանիչի, երգն է «սարդենի մահակով»²⁴, որին մեկնություններում վերագրված է առասպելական ծագում²⁵.

¹⁹ Ն. Աղոնց, անդ, Անանուն Մեկնիչ քերականին, էջ 130:

²⁰ Տե՛ս անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, Ն. Աղոնց, Երկեր, հ. Գ, Ե., 2008, էջ 4:

²¹ Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 1169:

²² Տե՛ս Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, Ե., 1966, էջ 80:

²³ Առաքել Սիւնեցի, անդ, էջ 97:

²⁴ Տե՛ս Ն. Աղոնց, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 4:

²⁵ Տե՛ս Թովհաննէս Երզնկացի, անդ, էջ 156: Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականին, Ե., 1972, էջ 83-84 նն:

«Լուծմունք»-ի հեղինակը որոշ կրճատումներով վերարտադրել է Սյունեցու տեքստը²⁶.

«Ասեն, թէ Ապողինար աստուածն հետ կուսի ի միոյ էած, որ շնայր և իւր կին առնէր [զնա: Իսկ կոյսն այն] փախեալ, [եւ այլ] աստուածքն խղճացին [կուսին], գերկիր բացին և կոյսն յերկիր մտաւ և պրծաւ [=գերծաւ] և յայն պատռուածոյն այս անուշահօտ ծառս բուսաւ [սարդենիս, զոր «հագնի» ասէին: Այս բուսաւ ի յիշատակ կուսին՝ որպէս կուսութիւնն միշտ կանաչ է եւ ոչ թոռոմի, եւ սրբութիւնն անուշահոտ է, այսպէս եւ ծառն այն միշտ կանաչ է եւ անուշահոտ: Եւ յայն ծառէն գաւազան գուգեցին], վասն այն ամէն տարի զայն գաւազանն ի ձեռն առնուին, և զայս [երգս] երգէին եւ ի մէկ մէկի յուս ելանէին [եւ զայս երգս երգէին: Եւ զայս երգս ԻԴ. ճառ արարին] եւ յերկու գիրք բաժանեցին՝ ԺԲ. ճառ ի մին գլուխ եւ ԺԲ. ի մին գլուխ, որ զանխով և զթաքուն և յերկար չերնի, և տղայքն յուսահատին և չկարդան: Մին գրոց անունն Ելիակոն, և մինն Յօղիսակոն» (անդ):

Թերի, տեղ-տեղ նաև խառնակ շարադրանքով է տրված տառի և վանկի նկարագրությունը: Հնչյունաբանության մեջ քերականը կարծես ընդունում է տառերի ու թվերի միաստիկ գուգակցումները, որոնց տուրք էր տվել Առաքել Սյունեցին, բայց բավարարվում է կցկտուր տեղեկություններով, որոնք չեն պարզաբանում նյութի էությունը, այսպես, օրինակ, առանց սկզբնաղբյուրի իմացության, հենվելով միայն «Լուծմունք»-ի տվյալների վրա՝ անհնարին է հասկանալ, թե ինչու են լ և գ հնչյունները «արու» կամ ը-ն «քառանգինի» (անդ)²⁷: Տարտամ է նաև վանկի և փաղառության տարբերությունը, «Յաղագս վանգի» վերնագրի ներքո խոսվում է փաղառությունից (անդ, 91ա-բ), ինչպես Թարգմանչի քերականության մեջ, այսինքն՝ հաղթահարված չէ հայերենի քերականության ամենավաղ և հետագայում բազմիցս պարզաբանված հակասություններից

²⁶ Կրճատումները վերականգնված են անկյունավոր փակագծերում:

²⁷ Հմմտ.՝ *Առաքել Սիւնեցի*, անդ, էջ 99-100:

մեկը²⁸: Այս շփոթն ավելի ակնառու է դառնում հետագա շարադրանքում, երբ փաղառության ներքո բերվում են վանկի երկար և սուղ տեսակները (անդ, 91բ):

Բառի և բանի կազմության՝ շաղաշարության վերաբերյալ նախորդ մեկնություններին հեղինակը նոր բան չի ավելացնում (անդ, 92ա). նշելի է միայն, որ այս հատվածի օրինակները՝ Հոմերոսի տաղի վերլուծությունը, Պատրոկղեի, Աքիլլեսի, Նեստորի մասին գրույցները, վերցված են Դավիթ Քերականից²⁹:

Հաջորդ՝ «Յաղագս բառի» վերնագրի ներքո, հավանաբար անփութության հետևանքով, տրված է բանի սահմանումը. «Ասացուած, որ յիրմէ ասումն, և որը զայլոց ասէ ամենայն բառեր իրար կապած» (անդ), իսկ բանի մասին շարադրանքում կցկտուր՝ մի քանի օրինակով հիշատակված են նրա տեսակները. «Անուն՝ Պօղոս, Պետրոս, բայ՝ եկ, բեր, տար եւ այլն» (անդ): Այդուհանդերձ, բուն սահմանումը ուշագրավ է և՛ այն պատճառով, որ բանի ավանդական ըմբռնումը ձևակերպվել է նորովի, և՛ որ նրա կապակցական հատկանիշն օժտվել է ավելի տարողունակ բովանդակությամբ: Նախ, ինչպես նկատելի է, ինքնին կամ «ինքնակատար» միտք արտահայտելու կարողությունը, որ նշել էր Թարգմանիչը³⁰, պարզեցված է՝ իբրև «յիրմէ ասումն», բացի այդ՝ ի տարբերություն Թարգմանչի և առաջին մեկնիչների, որոնք կապակցությունը սահմանափակում էին սոսկ շարադասությամբ³¹, տրված է ընդհանուր ձևակերպում՝ «բառեր իրար կապած», ինչը կարող է ենթադրել նաև կապակցության այլ եղանակներ՝ խնդրառություն, համաձայնություն:

Խոսքի մասերի փոքրիշատե համակարգված տեսություն «Լուծմունք»-ը չի առաջադրում, դրանք չունեն ամբողջական սահ-

²⁸ Գ. Ջահուկյան, Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը, էջ 252, *Եսայի Նշեցի*, անդ, էջ 93 և այլն:

²⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 253-54:

³⁰ Տե՛ս Ն. Աղոնց, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 12:

³¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, էջ 191:

մանումներ, կա՛մ բնորոշվում են առանձին հատկանիշներով, ընդ որում՝ գրեթե առանց մեկնությունների, կա՛մ բոլորովին զուրկ են տեսական հիմքերից: Մինչդեռ օրինակներին և դրանց բացատրություններին մեծ տեղ է տրված, ինչը ցույց է տալիս, որ տեսական ընդհանրացումներից առավել կարևորված են կիրառական հմտությունները:

Խոսքի մասերի նկարագրությունից հիշատակելի են հետևյալ դիտարկումները: Անվան և բայի ծագման հաջորդականության և ըստ այդմ՝ գերադասության հարցը, որ արծարծվել է առաջին մեկնություններից սկսած³², քերականը լուծել է հոգուտ անվան՝ «յառաջ մարդ անուամբ եւ ապա գործ» (անդ):

Անվան համար նա առանձնացրել է երկու հատկանիշ՝ «գոյացութիւն» և «որակութիւն». «Գոյացութիւն է, որ բաղկանայ, եւ որակութիւն» (անդ). սրանք բացակայել են Թարգմանչի սահմանման մեջ, հետագայում նկատի է առնվել միայն գոյացության հատկանիշը, իսկ ամբողջական ձևակերպումը տրվել է լատինաբան քերականության սկզբնավորման շրջանում՝ Հովհաննես Քոնեցու կողմից (ԺԴ. դ.)³³:

Դերանունը բաժանված է հետևյալ տեսակների՝ «Փոխանակ անուան, այլ անուն կամ թերի անուն» (անդ, 92բ): «Փոխանակ անուան»-ը և «թերի անուն»-ը փոխանականունություն և թերանուն ձևերով վկայված են Դավթի քերականության մեջ, որը ճանաչում էր նաև հասարակ անունը³⁴: Մինչդեռ «այլ անուն»-ը նախօրինակ չունի և կարող է համարվել «Լուծմունք»-ի նորակազմություն: Քանի որ այս տեսակների թվարկմանը չի հաջորդում մեկնություն, պարզ չէ՝ «այլ» և «թերի» բնորոշումները տարբերակվա՞ծ են որպես առանձին եզրույթներ, թե՞ շաղկապված են որպես հոմանիշ ձևեր, որոնք

³² Տե՛ս Գ. Ջահուկյան, անդ, էջ 139, 166 նւ:

³³ Տե՛ս Ս. Միրունյան, Հովհաննես Քոնեցու քերականական երկի սահմանումների լատիներեն նախօրինակները // «Բանբեր Մատենադարանի» 24, Ե., 2017, էջ 123-134:

³⁴ Տե՛ս Գևորգ Ջահուկյան, «Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը», էջ 261:

անվանում են միևնույն տեսակը: Երկու վարկածներն էլ նկատի առնելով՝ կարելի է ասել, որ հեղինակը դերանունը դիտել է իբրև անվանը փոխարինող բառ, որը այլ անունով և / կամ թերի կերպով կատարում է անվան դերը:

Այսպիսով, մեր քննության առարկա «Լուծմունք»-ը, ինչպես հիշատակված աղբյուրներից պարզ դարձավ, նշանակալի չափով հենվում է Առաքել Սյունեցու աշխատության վրա և նաև պարունակում տեղեկություններ այլ քերականներից: Քերականության բաժիններն ունեն սեղմ շարադրանք, որը, սակայն, բավարար խնամքով մշակված չէ, տեղ-տեղ հիշեցնում է հապճեպ սղագրություն: Հասկացական մակարդակում էական նորություններ չկան, հեղինակի ինքնուրույնությունը սահմանափակվում է ավանդական ըմբռումների վերաձևակերպումներով, որոնք երբեմն կարող են հանդես բերել իմաստային որոշ տարբերություններ, աշխատությունն օժտված չէ մեկնողական մանրամասներով, փոխարենը մեծ տեղ է տրված օրինակներին ու զրույցներին: Հաշվի առնելով նյութի մատչելի մատուցման ընդհանուր միտումը³⁵՝ կարելի է ենթադրել, որ ԺԵ. դարի այս «Լուծմունք»-ը ստեղծվել է կիրառական նպատակով՝ որպես տեսական գիտելիքներն ամրացնելու օժանդակ ձեռնարկ:

Ключевые слова: рукопись, Аракел Сюнеци, грамматика, Матена-даран, рукопись грамматики.

Сирунян Т. Г. - Исследование одной грамматической рукописи (XV век). - В статье исследуется рукопись грамматики хранящаяся в Матенадаране (автор неизвестен), выявляется, что она в значительной степени опирается на труд Аракела Сюнеци, отделы грамматики имеют сжатое изложение, не содержат существенных новинок, вместо комментариев большое место уделяется примерам и беседам. Посему резюмируется, что создание

³⁵ Սա արտահայտվել է նաև լեզվի մեջ՝ բարբառային-խոսակցական ձևերի հաճախակի գործածությամբ. տե՛ս Գևորգ Ջահուկյան, անդ, էջ 351:

грамматики имело прикладную цель – вспомогательное пособие для закрепления теоретических знаний.

Keywords: manuscript, Arakel Syunetsi, grammar, Matenadaran, grammar manuscript.

Sirunyan T. Gh. - A study of one grammatical manuscript (XV century). - The article examines the grammar manuscript (unknown author) stored in the Matenadaran, reveals that it largely relies on the work of Arakel Syunetsi, the grammar sections have a concise presentation and don't contain significant novelties, instead of comments, a large place is given to examples and conversations. Therefore, it is summarized that the creation of grammar had an applied purpose - an auxiliary means for consolidating theoretical knowledge.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ղարսյան
annagharslyan@gmail.com

Հիմնաբառեր: Տնտեսագիտական տերմին, փոխառություն, հայերեն համարժեք տարբերակ, ընդհանուր և միջտերմինահամակարգեր, գիտա-ճյուղեր, տերմինային բազմիմաստություն, տերմինային հոմանիշություն:

Անտիկ ժամանակներից մինչև օրս իր ձևավորման, կայացման, կատարելագործման որոնողական ճանապարհն է գծում տնտեսագիտությունը, որի զարգացումը իր պարբերական շարժման մեջ ազդակ է դառնում նոր հասկացությունների առաջացմանը: Վերջիններիս անվանողական գործառույթը նպաստում է տնտեսագիտական տերմինահամակարգի անընդմեջ համալրմանը: Մասնագիտական բառապաշարի ձևավորումն ու զարգացումը պայմանավորված են տնտեսագիտության ուսումնասիրության առարկայով, որն է՝ մարդկանց տնտեսական վարքագիծը: Այն կարգավորվում և դրսևորվում է նաև քաղաքական, իրավական, աշխարհագրական, սոցիալական և այլ բնագավառներում:

Վերոնշվածից ելնելով՝ սահմանենք *տնտեսագիտական տերմին* հասկացությունը:

Ինչպե՞ս ենք որոշում տերմինների պատկանելությունը այս կամ այն բնագավառին մասնավորապես այնպիսի դեպքերում, երբ որևէ բնագավառի տերմին գործածվում է տարբեր ոլորտներում: Տերմինագիտության մեջ տերմինահամակարգերը տարբերակվում են իրենց հետազոտության ենթակա առարկայով: Ըստ այդմ՝ որևէ բնագավառի պատկանող տերմին «պետք է արտահայտի հենց այդ բնագավառի առարկայի (երևույթի, գործունեության, գործընթացի,

հետազոտության առարկայի և այլնի) հասկացություն»¹: Հետևաբար տնտեսագիտական տերմինները սահմանափակ ռեսուրսների պայմաններում մարդկանց տնտեսական վարքագծի վերաբերյալ հասկացություններ արտահայտող լեզվական միավորներ են²:

Տարբերակում ենք տնտեսագիտական տերմինահամակարգ և նրանից սկիզբ առած, սնուցվող, առանձին լեզուների պատկանող տերմինահամակարգեր:

Տնտեսագիտության առաջընթացը մարդկային հասարակության տնտեսական գործընթացների և երևույթների առաջացման, հաստատման և զարգացման պատմություն է: Հետևաբար, իր կառուցվածքային աստիճաններով ու գործառույթներով պայմանավորված³ և իր տեսական առաջին ձեռքբերումներից սկսած⁴ այն գիտական շտեմարաններում պահպանում է մարդկության տնտեսական զարգացմանը վերաբերող բազմաքանակ նյութ՝ իր ընդհանուր տերմինահամակարգով:

Տնտեսագիտական տերմինահամակարգը բավականին ընդգրկուն է: Այն պայմանավորված է իր մանրահամակարգերի⁵ բազմազանությամբ: Դրանք տերմինահամակարգը բնութագրում են ստորակարգային հատկանիշներով՝ համակարգի և նրա ներքին

¹ *Էդ. Աղայան*, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 8:

² *Հ. Աղաջանյան*, Տնտեսագիտության տեսություն, մաս I, Ե., 2009, էջ 13:

³ Տե՛ս *Լ. Սնանյան*, *Լ. Պետրոսյան*, «Տնտեսական պատմություն» ուսումնական ձեռնարկ, Ե., 2005, էջ 5-7:

⁴ Տնտեսագիտության տեսական առաջին աշխատությունը Գ.Բյուդեի «Տրակտատ ասայի մասին» է, որը լույս է տեսել Ֆրանսիայում 1514 թ.-ին, հաջորդը Վ. Պետտիի ուսումնասիրությունն է՝ «Տրակտատ հարկերի և տուրքերի մասին» (1662 թ.), իսկ առավել ընդգրկունը՝ Ա. Սմիթի գործը՝ «Հետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» (1776 թ.):

⁵ Մանրահամակարգերը պայմանավորված են տնտեսական գիտությունների դասակարգմամբ՝ ըստ ճյուղային կառուցվածքի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ և կապ, շինարարություն), ըստ գործառույթային նշանակության (ֆինանսներ, վարկ, մարքեթինգ, կառավարում, արժեթղթեր, ապահովագրություն, բնօգտագործում և այլն), ըստ տնտեսության մակարդակների (միկրոտնտեսագիտություն, մակրոտնտեսագիտություն, մեզոտնտեսագիտություն, համաշխարհային տնտեսագիտություն) և այլն:

միավորների ներքին կապերի բնույթով, նրանց ներքին էությամբ⁶: Գերադասի համեմատ՝ մանրահամակարգերը միմյանց նկատմամբ կարող են լինել համադաս: Այսինքն՝ եթե տնտեսագիտական տերմինահամակարգը առանձնացնում է բոլոր մանրահամակարգերի համար ընդհանուր գործածության տերմիններ (կապիտալ, բյուջե, բիզնես, բանկ, մարքեթինգ...), ապա մանրահամակարգերը ընդգրկում են նեղ մասնագիտական տերմիններ, որոնք գործածվում են տնտեսական տարբեր գիտակարգերում՝ ֆինանսական (էմիսիա, դիսկոնտ, սուբվենցիա, ավիզո), հաշվապահական (աժուր, դեբետ, կրեդիտ, ակցիզ, մարժա), տնտեսագիտական (դիվիդենտ, դեպորտ, կոնդիցիա, ալպարի) և այլն, առանձին վերցրած միմյանց նկատմամբ հավասարազոր են, համադաս:

Ուստի տնտեսագիտական տերմինահամակարգը տարբեր լեզուների տերմինահամակարգերի համար փոխառությունների մեծ պահոց է, որից օգտվում է ցանկացած զարգացած երկրի լեզու և ինչպես իր բառակազմական եղանակներով ու միջոցներով, այնպես էլ փոխառություններով ձևավորում սեփական տերմինահամակարգը:

Արդի հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգը՝ որպես լեզվաքննության առարկա, արժանացել է մի քանի գիտական ուսումնասիրությունների՝ կապված տերմինաբանության զարգացման միտումների, համալրման աղբյուրների, մասնավորապես՝ նորաստեղծ տերմինների, բառակազմական կաղապարների հետ⁷:

Սույն հոդվածի նպատակն է արդի հայերենի տնտեսագիտական փոխառյալ տերմինները լեզվաքննության ենթարկել՝ ուսում-

⁶ Տե՛ս *Լ. Խաչատրյան*, Հայերեն լեզվաբանական տերմինների աստիճանակարգության հարցեր // «Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա», պրակ Ա, Ե., 2020, էջ 92:

⁷ Տե՛ս *Մ. Գրիշկյան*, Նորաբանությունները ժամանակակից հայերենի և անգլերենի տնտեսագիտական բառաշերտում, 2016; «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ժողովածու, - *Վ. Կատվայան*, Տնտեսագիտության տերմինաբանության զարգացման միտումների մասին, Եր., 2021: *Մ. Տիոյան*, Հայերենի տերմինագիտության հարցեր, Եր., 2016:

նասիրելով ծագումը, իմաստային դրսևորումները, ցույց տալով փոխառությունների զարգացումն ու կապը տնտեսագիտության և հարակից գիտությունների տերմինահամակարգերի հետ:

Ուսումնասիրվել է մոտ 250 տնտեսագիտական փոխառյալ տերմին:

Տնտեսագիտական տերմինահամակարգի կապը տարբեր գիտատերմինահամակարգերի հետ: Ցանկացած գիտություն հասարակական ձեռքբերում է, հետևաբար այն չի կարող մեկուսի ձևավորվել, զարգանալ և չազդվել արտաքին գործոններից: Ուստի օրինաչափ է գիտության որևէ ճյուղի պատկանող տերմինի գործածությունը գիտական այլ ոլորտ(ներ)ում: «Այդ փոխադարձ կապի արդյունքում առաջ են գալիս երկու (կարող է նաև ավելի) բնագավառների կամ ճյուղերի ընդհանուր հասկացություն-տերմիններ՝ առաջացնելով տերմինաբանական միջհամակարգեր և ընդհանրական տերմինահամակարգեր»⁸:

Տնտեսագիտությունը, լինելով հասարակական գիտություն, սերտ կապի մեջ է փիլիսոփայության, իրավագիտության, քաղաքագիտության, հոգեբանության, մշակութաբանության, մարդաբանության, աշխարհագրության, պատմության, սոցիոլոգիայի, բնական գիտություններից՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, որոշ չափով՝ կենդանաբանության և բուսաբանության հետ, քանի որ այդ գիտությունների «հետազոտության արդյունքների օգտագործումը նպաստում է ավելի խորությամբ ճանաչելու տնտեսական երևույթները և դրանց համապատասխան օրինաչափությունները»⁹:

Գիտությունների փոխկապակցված զարգացումը տերմինահամակարգերում արտահայտվում է բառային նոր միավորների համալրմամբ, որոնց մեծ մասամբ փոխառություններ են:

Միջգիտական կապի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստող տնտեսագիտական փոխառյալ տերմինները, հասկապես՝ մի-

⁸ Հ. Պետրոսյան, Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանություն, մաս II, Եր., 2010, էջ 28:

⁹ Հ. Աղաջանյան, նույն տեղում, էջ 43:

ջազգային նշանակություն ունեցողները, մասնագիտական ոլորտից զատ, գործածվում են նաև այլ գիտաօլորտ(ներ)ում: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Տնտեսագիտության և փիլիսոփայության կապը արտահայտված է *տնտեսագիտության փիլիսոփայություն* գիտակարգով¹⁰: *Փիլիսոփայությունը* առկա է բոլոր գիտություններում: Այն զբաղվում է նոր, նախկինում գոյություն չունեցած երևույթների որոնմամբ, հայտնաբերմամբ և բացահայտում դրանք արմատապես: Առանձին գիտակարգեր, զարգացնելով բացահայտված հասկացությունների փիլիսոփայական ընկալումը, իրենց ուսումնասիրման շրջանակներում տալիս են այդ երևույթների մասնագիտական բացատրությունները և սահմանումները: «Փիլիսոփայական մտածողությունը օգնում է տնտեսական երևույթների ուսումնասիրությունը կատարել դրանց փոխադարձ կապի մեջ և այդ հիմքի վրա բացատրել համընդհանուր օրինաչափությունները»¹¹: Ուստի հանդիպում են տնտեսագիտական տերմիններ, որոնց առավել ընդհանրական նշանակությունները տեսնում ենք փիլիսոփայական բառարաններում¹², իսկ նեղ մասնագիտական բացատրությունները՝ մասնագիտական բառարաններում: Այսպես, կապիտալ, *արժեք*, *պահանջ-մուկ*¹³ տերմինները համընդհանուր են տնտեսագիտության և փիլիսոփայության համար: Եթե փիլիսոփայությունն ուսումնասիրում է այս տերմիններով արտահայտված հասկացությունների ներքին բնութագրական հատկանիշները, ապա տնտեսագիտությունը, դրանք օգտագործելով, հասկացություններն ուսումնասիրում է որոշակի գործառական տեսանկյունից: Այսպես, *կապիտալ* բառը փիլիսոփայական ըմբռնմամբ դիտարկվում է որպես ընդհանրա-

¹⁰ Տե՛ս Ա. Մարգարյան, Տնտեսագիտության փիլիսոփայություն, Ե., 2020:

¹¹ Հ. Աղաջանյան, Տնտեսագիտության տեսություն, մաս I, Ե., 2009, էջ 40:

¹² Փիլիսոփայական բառարան (Մ. Ռոզենտալի խմբագրությամբ), Ե., 1975; *Л. Ф. Ильичев, П. Н. Федосеев, С. М. Ковалев, В. Г. Панов, Философский энциклопедический словарь*, М., 1983:

¹³ Ընդգծված տերմիններին չենք անդրադառնալու, քանի որ փոխառություններ չեն:

կան հասկացություն, որը վերաբերում է տվյալ ազգի քաղաքակրթական մակարդակին, ավանդական բարքերին, հոգևոր ու բարոյական արժեքներին, մտավոր ներուժին, բնական հարստությանը, գիտության զարգացման աստիճանին և այլն: Իսկ իբրև տնտեսագիտական տերմին՝ այն բնութագրվում է որպես *արտադրության գործոն*, որի կարևոր դերը հնարավոր չէ ներկայացնել առանց փիլիսոփայական ընկալման:¹⁴

Տնտեսագիտական տերմինների հաճախակի գործածություն է նկատվում իրավաբանական գրականության մեջ, մասնավորապես՝ օրենսգրքերում: Պատճառն այն է, որ իրավագիտության սպասարկման դաշտը բավականին մեծ է: Վերջինս այս կամ այն չափով կարգավորում է գիտական գրեթե ցանկացած բնագավառ: Կապը տնտեսագիտության հետ սերտ է, քանի որ իրավախախտումների ոխակը մեծ է սույն բնագավառում: Տնտեսագիտական այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են հարկումը, ֆինանսական և հաշվապահական հաշվետվությունները, գործարքներն ու ստուգումները կատարվում են բացառապես իրավական նորմերի սահմաններում¹⁵: Ուստի այս գիտությունների տերմինահամակարգերի ներթափանցումներն ունեն ակնառու օրինակներ:

Տերմինը չի կորցնում իր մասնագիտական բնորոշումը, եթե նույն նշանակությամբ է գործածվում այլ գիտահամակարգ(եր)ում, օրինակ՝ *էներգետիկա, ակտիվներ, ինկաստ, բյուջե, կոնցեսիա, բոնիֆիկացիա, դոտացիա, էմիսիա, էմիտենտ* և այլ տնտեսագիտական տերմիններ, պահպանելով նեղ մասնագիտական նշանակությունը¹⁶, ակտիվորեն գործածվում են իրավատերմինահամա-

¹⁴ Տե՛ս Ն. Աղաջանյան, նույն տեղում:

¹⁵ Տե՛ս *Е. П. Попова*, Связь экономической науки с другими науками, 2021, https://spravochnik.ru/ekonomika/svyaz_ekonomiki_s_drugimi_naukami/:

¹⁶ Սույն և ներքոնշյալ տնտեսագիտական փոխառյալ տերմինների բացատրությունները տե՛ս հետևյալ բառարաններում՝ *Հ. Գրգեարյան, Ն. Հարությունյան*, Տնտեսական աշխարհագրության տեղեկատու բառարան, Ե., 1982; *Գր. Կիրակոսյան, Հ. Ղուշյան, Բ. Տիգրանյան*, Տնտեսագիտական բացատրական բառարան, Ե., 1999; *Ա. Բայադյան*, Ֆինանսական բացատրական բառարան, Ե., 2004; *Կոբալյան Ա.*, Իրավաբանական համառոտ բացատրական բառարան, 2005; *Ա. Մարկոսյան*,

կարգում, մասնավորապես՝ մաքսային, հարկային և այլ օրենսգրքերում և օրենքներում¹⁷: Օրինակ՝

Մասնակի վճարները կարող են ընդունվել բանկային կանոններով սահմանված դեպքերում կամ ինկաստ հանձնարարության մեջ հատուկ թույլտվության առկայությամբ¹⁸:

Այս երևույթը առաջ է բերում տերմինահամակարգերի փոխադարձ ներթափանցումներ և հանգեցնում գիտությունների տերմինաբանական միջհամակարգերի ձևավորման:

Գիտահամակարգերի մերձավորությամբ պետք է բացատրել նաև մեկ այլ երևույթ: Երբ տարբեր տերմինահամակարգեր ունենում են նույն տերմինաբանական միավորները, որոնք արտահայտում են մասնագիտական բոլորովին այլ իմաստներ: Ըստ լեզվաբան Էդուարդ Ադայանի՝ «...գիտությունների զարգացման ընթացքում մեկի ձեռք բերած նվաճումները օգտագործվում են նաև հարակից մի շարք գիտությունների կողմից, յուրացվում նաև նրանց կողմից: Այս դեպքում էլ նախապես տվյալ բնագավառին հատուկ տերմինը անցնում է մյուս գիտություններին՝ դառնալով մի քանի գիտությունների տերմինաբանական համակարգի ընդհանուր տարր»¹⁹: Այսպես, տնտեսագիտական մի շարք տերմիններ, ընդլայնելով կամ նեղացնելով իրենց իմաստները, այսօր տալիս են տարբեր գիտաճյուղ(եր)ի՝ իրավագիտության, քաղաքագիտության, փիլիսոփայության, հոգեբանության, դիվանագիտության և այլնի մասնագիտական ուրույն բնորոշմամբ նշանակություններ: Օրինակ՝ *դեպոզիտ, էմբարգո, ռեիզիա* և այլ տնտեսագիտական տեր-

Տ. Դավթյան, Ամենագործաձական տնտեսագիտական տերմինների բացատրական բառարան, Ե., 2008; *Դ. Ջհանգիրյան*, Բանկային տերմինների բացատրական բառարան, Ե., 2008; *Ա. Հայրապետյան*, Օտար բառերի բառարան, Եր., 2011; *Ավ. Ավետիսյան*, Հայերենում գործածվող օտար բառերի բառարան, Ե., 2014:

¹⁷ Տե՛ս նաև ՀՀ հարկային օրենսգիրք, 01.01.2018, ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038; ՀՀ մաքսային օրենսգիրք, 01.01.2001, ՀՀՊՏ 2000.08.21/19(117); ՀՀ օրենքը ՀՀ բյուջետային օրենքի մասին, 21.08.1997 ՀՀՊՏ 1997.08.11/18:

¹⁸ Տե՛ս նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998), ՀՀՊՏ 1998.08.10/17(50), հդ., 943:

¹⁹ *Էդ. Ադայան*, Տերմինագիտություն, Ե., 1978, էջ 9:

միններ արդի հայերենի տերմինահամակարգում գործածվում են նաև որպես իրավաբանական կամ այլ գիտակարգի տերմիններ: Ինչպես՝

Դեպոզիտ - 1. (ֆին.): Ավանդ՝ դրամական գումար կամ արժեթղթեր, որոնք հանձնվում են բանկերին կամ խնայդրամարկղերին՝ ի պահ:

2. (իրավբ.): Դատական հիմնարկներ (նոտարական գրասենյակ) մուծվող գումար՝ պահանջատերերին հանձնելու կամ պահելու համար:

Էմբարգո - 1. (տնտսգ.): Որևէ բանի արտահանման ու ներմուծման արգելք: 2. (իրավբ.): Օտար տերության պատկանող ունեցվածքի (նավի, բեռների ևն) ներկալում, նավարգելք:

Ռնիզիա - 1. (տնտսգ.): Հաստատության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում: 2. (դվնգ.): Միջազգային պայմանագրի վերանայում:

Ակրեդիտիվ - 1. (ֆին.): Դրամական փաստաթուղթ, որը պարունակում է մի բանկի վճարման հրաման մյուսին՝ ինչ-որ մեկին որոշակի գումար վճարելու: 2. (դվնգ.): Հավատարմագիր՝ լիազորագիր, որը հնարավորություն է տալիս լիազորելու որևէ դիվանագետի աշխատելու այլ պետության մեջ:

Ինդեքս - 1. (տնտսգ.): Ցուցանիշ՝ թվանշանային ցուցիչ, որ տոկոսներով արտահայտում է որևէ տնտեսական երևույթի հաջորդական փոփոխությունը: 2. (բժշկ.): Թվանշանային ցուցիչ, որ արտահայտում է մարմնի զանազան մասերի միջև եղած հարաբերությունը: 3. (մաթ.): Թվային կամ տառային ցուցիչ, որը դնում են աջից՝ թվանշանի կամ տառի կողքին: 4. (գրդր.): Ցուցիչ՝ դասակարգման աղյուսակների համար նշան՝ բաժնի կամ ենթաբաժնի տառային, թվային կամ խառը նշում, որը համապատասխանում է նկարագրված երկի բովանդակությանը:

Հանդիպում են նաև հակառակ երևույթի օրինակներ, երբ այլ գիտակարգերի տերմիններն են ընդլայնում իրենց իմաստները՝ անվանելով տնտեսագիտական կամ այլ գիտակարգերի հասկացու-

թյուններ: Այսպես՝ *նոտիֆիկացիա* - 1. (իրավբ.): Միջազգային իրավունքում՝ մի պետության կողմից մյուսին միջազգային այս կամ այն հարցի վերաբերյալ սեփական մոտեցումների մասին տեղեկացնելը: 2. (ֆին.): Ծանուցագրում (մուրհակը բողոքարկման ուղարկելու մասին): 3. (դվնգ.): Հայտագրում, հայտագրով հայտնվելը. *պարհիտետ* - 1. (իրավբ.): Հավասարություն, հավասարիրավություն: 2. (տնտեսգ.): Տարբեր երկրների դրամական միավորների փոխհարաբերությունը ոսկով. *ռեպատրիացիա* - 1. (քղբ.): Գերիների, տարագիրների, փախստականների վերադարձը հայրենիք, հայրենադարձություն: 2. (բանկ.): Արտասահմանյան բանկի կամ ռեզիդենտ բանկի մասնաճյուղի կողմից ֆինանսական ակտիվների վերադարձը հայրենիք. *ռոնիթորինգ* - 1. (քղբ.): Ինչ-որ գործընթացի կամ վիճակի հետևելը: 2. (տնտեսգ.): Դիտորդում՝ անընդմեջ վերահսկողություն տնտեսական գործընթացների նկատմամբ. *ռեալվացիա* - 1. (աշխգր.): Դրամական միավորի ոսկու պարունակության պաշտոնական բարձրացում կամ նրա վալյուտային կուրսի փաստական բարձրացում: 2. (բանկ.): Ազգային կամ միջազգային արժույթի փոխարժեքի բարձրացում²⁰:

Նույն տերմինը, տարբեր նշանակություններով պատկանելով տարբեր գիտաճյուղերի, տերմինաբանական համակարգում առաջացնում է լեզվական ոչ ցանկալի մի երևույթ, որը կոչվում է տերմինային բազմիմաստություն: Վերջինիս պատճառով առաջանում են իմաստային տարընկալումներ. տնտեսագիտական և այլ ոլորտի տեքստերի ընթերցումը դառնում է դժվարընկալելի:

Այսպիսով, տնտեսագիտությունը, այլ գիտակարգերի հետ ունենալով որոշակի աղերսներ, ձևավորում է նշված գիտությունների տերմինահամակարգերի հետ ընդհանրական և միջտերմինահամակարգեր: Ստեղծվում են «տերմինաբանական խառը՝ փոխհատվող խմբավորումներ», որոնց առկայությունը տարբեր գիտակարգե-

²⁰ Մասնագիտական բառերի տարբեր հաջորդականությունը (օրինակ՝ տնտեսգ., իրավբ., կամ իրավբ., տնտեսգ.) հուշում է, որ տերմինները հաճախակի են գործածվում նշված առաջին տերմինահամակարգում:

րում թույլ է տալիս մտածել, որ «այսօր գրեթե չկան առանձին (մեկուսի) անադարտ տերմինահամակարգեր»²¹:

Տնտեսագիտական փոխառյալ տերմինների ծագումնաբանական և իմաստային դրսևորումները: Հիմք ունենալով տնտեսագիտության նախապատմությունն ու նրա՝ որպես գիտական համակարգի կայացման ուղին՝ առավել հիմնավոր կարող ենք խոսել արդի հայերենի տնտեսագիտական փոխառյալ տերմինների ծագման մասին:

Փոխառությունների ծագումնաբանական առանձնահատկությունները կապված են համաշխարհային տնտեսագիտության պատմական զարգացման հետ:

«Տնտեսագիտությունը՝ որպես գիտություն, ծագել է շատ ավելի ուշ, քան տնտեսության վարման մասին դատողությունները՝ տնտեսագիտական միտքն ու տնտեսական մտածողությունը: Վերջիններս (և սա անառարկելի է) մարդ կոչվածի անբաժան ուղեկիցն են եղել նրա արարման ավարտի հենց առաջին ակնթարթից: ... Միայն մտածողական ու գիտելիքի որոշակի պաշարի կուտակումից հետո են արվել տեսական ընդհանրացումների առաջին փորձերը»²², որոնց միջոցով էլ գրավոր ճանապարհով հաստատվել և իբրև պատմագիտական ժառանգություն փոխանցվել են տնտեսագիտական առաջին տերմինները²³:

Դեռևս վաղ ժամանակներում և միջնադարում տնտեսագիտական հայացքներն ու պատկերացումները ձևավորվել են առավելապես Հին Հունաստանում և Հին Հռոմում, միջնադարում դրանց զարգացումն ընթացել է երկու ուղղություններով՝ իսլամական արաբական Արևելքում և արևմտաեվրոպական քրիստոնեական երկրներում:

²¹ Հ. Պետրոսյան, Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանություն, մաս II., Ե., 2010, էջ 30-31:

²² Գ. Գալստյան, Հ. Մարգարյան, Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները, Ե., 2016, էջ 8:

²³ Տնտեսագիտությանը վերաբերող առաջին աշխատությունը՝ Գ. Բյուդեի «Տրակտատ ասսայի մասին», լույս է տեսել Ֆրանսիայում 1514 թվականին: Տե՛ս Լ. Անանյան, Լ. Պետրոսյան, «Տնտեսական պատմություն» ուսումնական ձեռնարկ, Ե. 2005, էջ 4:

րում: Հետևաբար այս երկրների լեզվական արտահայտումները խոր արտացոլում են գտել տնտեսագիտական մտքի և տերմինահամակարգի ձևավորման, զարգացման և կայացման ճանապարհին, ու մինչ օրս դրանց մեծ մասը կիրառելի է տնտեսագիտական տերմինահամակարգում: Արդի հայերենի տնտեսագիտական բառապաշարում մեծ թիվ են կազմում հունական ծագում ունեցող տերմինները, ինչպես՝ *ազրոնում, բիրժա, էկոնոմիկա, էներգետիկա, կրիտերիա, օլիգոպոլիա, սինդիկատ, հիպոթեկա, կրիզիս* և այլն: Հունարենին գերակշռում են լատինական ծագման տերմինները, ինչպես՝ *ակցիզ, արենդա, դեպոզիտ, դոտացիա, կապիտալ, կրեդիտ, սուբվենցիա, ռեֆլյացիա, պրեֆերենցիա* և այլն: Հետազոտության առարկա նյութից առանձնացրել ենք արաբական ծագման 1՝ *տարիֆ* տերմինը:

Տեսական տնտեսագիտությունը իբրև գիտակարգ սկսեց ձևավորվել 17-18-րդ դարերում, երբ զարգանում էր եվրոպական երկրների տնտեսությունը, գրի էին առնվում տնտեսագիտական նոր պատկերացումներ և հայացքներ: Դասական տնտեսագիտության կայացման երկիր է դառնում Անգլիան²⁴: Այս հանգամանքի վկայությունն են անգլիական ծագում ունեցող տնտեսագիտական բազմաքանակ տերմինները, ինչպես՝ *աուդիտ, բիզնես, բյուջե, օֆշոր, տրեստ, դեմպինգ, դիլեր, տենդեր, լիզինգ, հեջինգ, վաուչեր, ինսայդեր, ֆակտորինգ* և այլն: Այսօր էլ հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգում շարունակվում է անգլերեն տերմինների հոսքը, այն էլ՝ առանց միջնորդ լեզվի, ինչպես՝ տենդեր, սվոփ, ստարթափ, բայ բեք, բոներ, թայմ-չարտեր և այլն:

Բավականին մեծ թիվ են կազմում *իտալական ծագման* տերմինները, օրինակ՝ *սալդո, վալյուտա, նետտո, բրուտտո, ինկասսա-տոր, ինկաստ, ավիստա, օբլիգո* և այլն²⁵:

²⁴ Տնտեսագիտությունը գիտական բնագավառում առանձին գիտակարգ «հռչակվեց» անգլիացի մտածող Ադամ Սմիթի ջանքերով:

²⁵ Չմոռանաք, որ իտալերենը ծագել և ձևավորվել է լատիներենի ազդեցությամբ, որն էլ կարող է լինել իտալերեն տերմինների «առատության» պատճառ:

Արդի հայերենի տնտեսագիտական տերմինահամակարգն աչքի է ընկնում եվրոպական այլ լեզուներից փոխառված տերմիններով, ինչպես՝

Ֆրանսերենից փոխառված տերմիններ՝ *ավանս, ակցիոն, դեպորտ, աժուր, բանկ, դիսբալանս, մոնետարիզմ, ռիսկ, ֆրանշիզա* և այլն,

գերմաներենից փոխառված տերմիններ՝ *ակրեդիտիվ, դեկորտ, վեկսել,*

իսպաներենից փոխառված տերմիններ՝ *կարգո, կոմպրադոր, էմբարգո, ֆիսկալ:*

Տնտեսագիտական տերմինահամակարգի ձևավորման համար հիմք են դարձել այն երկրների լեզուները (հունարեն, լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն, ...), որոնցով մտածել են, հաղորդակցվել և գրի առել տնտեսագիտական առաջին պատկերացումներ, մտքեր ու գաղափարներ ունեցող անհատները: Կուտակված փորձի հիման վրա գրվել են առաջին տեսական նյութերը: Այս ամենի շնորհիվ՝ տնտեսագիտությունը ձևավորվել, զարգացել է իբրև առանձին գիտակարգ, որի մշտական ուղեկիցն է եղել մասնագիտական բառապաշարը՝ իր աստիճանական համալրմամբ և կայացմամբ:

Արդի հայերենի տնտեսագիտական փոխառությունների լեզվագործառական զարգացման ընթացքը տարաբնույթ է: Այս առումով առանձնացնում ենք փոխառությունների 4 խումբ: Հավելենք, որ փոխառությունների մեծ մասն ունի միջազգային նշանակություն:

1. Փոխառություններ, որոնք չունեն հայերեն համարժեք տարբերակներ, ինչպես՝ *աժիո, դեպոզիտարիա, էմբարգո, լիստինգ, բիֆլյացիա, ֆակտորինգ, ֆյուչերս, կոնցեսիա, օֆշոր* և այլն:

2. Մրցորդ փոխառություններ, որոնք ունեն իրենց հայերեն համարժեք տարբերակներին զուգահեռ գործածություն. «Եթե հաղթում են, անցնում են հիմնական բառազանձ»²⁶, *օրինակ՝ մարքեթինգ – շուկայագիտություն, մենեջնենթ – կառավարում, դիվիդենտ*

²⁶ Յու. Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ե., 2019, էջ 36:

– շահութաբաժին, դեպոզիտ – արժենվագում, սուբստրենդա – ենթավարձույթ, աուդիտ – հաշվետուցում, դեկորտ – սպրանքագեղչ, դեպորտ – հետադարձում, դեֆիցիտ – պակասուրդ, դեմպինգ – գնազցում, էքսպորտ – արտահանում, էկոլոգիա – բնապահպանություն, իմպորտ – ներմուծում, ինկասացիա – դրամագանձում, կալկուլյացիա- արժեհաշվում, դոտացիա – լրավճար, հեջինգ – կրկնագործարք, սալդո – հաշվեմնացորդ, ռեզրես – հետընթաց, ֆրանշիզա – առանձնաշնորհ, ինֆլյացիա – գնաճ, դեֆլյացիա – գնանկում, կորպորացիա – մասնատիրություն, տաքսացիա – գնահատում, դեպոզիտ – ավանդ, ֆիլիալ – մասնաճյուղ, օվերդրաֆտ – վերազանցում, ֆիսկալ – հարկաբյուջետային և այլն²⁷: Այս բառազույգերը ստեղծում են տերմինային հոմանիշություն, այսինքն՝ առանց որևէ սահմանափակման կարող են փոխարինել միմյանց մասնագիտական խոսքում:

Արդի հայերենի տնտեսագիտական փոխառություններում տերմինային հոմանիշությունը իր դրսևորման նվազագույն շեմին է: Պատճառն այն է, որ տերմինների մեծամասնությունը միջազգային նշանակության բառեր են, և անգամ դրանց հայերեն համարժեքների առկայությունը լուրջ խոչընդոտ չի կարող դառնալ հոմանիշության տարածմանը, քանի որ դրանք թվով սահմանափակ են՝ կապված փոխառության իմաստը լիաժամակալ հայերեն համարժեքով արտահայտելու հետ:

3. Փոխառություններ, որոնք գերազանցում են իրենց գործածությամբ հայերեն տարբերակներին, քանի որ վերջիններս ամբողջ ծավալով չեն արտահայտում անվանվող հասկացությունների իմաստային դաշտը, օրինակ՝ *բիզնես – գործարարություն, բանկ – դրամատուն, բիրժա – սակարան, աուդիտոր – հաշվետուցիչ* (առավել հարմար տարբերակ է *հաշվետուցող* բառը, որը տերմինային թարգամության մեջ նշված չէ), *ինկասատոր – գանձիչ, ինսայդեր – ներքնանձ, կապիտալ – դրամազլուխ, կոնսիգնացիա – վաճառատվություն, հիպոթեք – գրավադրում, չարտեր – վարձերթ*,

²⁷ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Ե., 2006:

ստագֆյացիա – լճագնաճ, վալորիզացիա – արժեաճեցում, տենդեր – առևտրամրցույթ, տրանսֆեր-փոխանցում և այլն:

«Օտար բառերի բառարանում» *լիզինգ* և արենդա փոխառությունների հայերեն համարժեք տարբերակը նշվում է *վարձակալություն* բառը, որից հետո տրվում է յուրաքանչյուր տերմինի մանրամասն բացատրություն: Հետևաբար չպետք է նույնացնել սույն փոխառությունները, քանի որ դրանք անվանում են վարձակալության տարբեր տեսակներ: Այսպես՝

լիզինգ - «Վարձակալություն՝ արտադրական կառույցների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների երկարաժամկետ վարձակալություն».

արենդա – «Վարձակալություն՝ հողի՝ շինության և այլնի ժամանակավոր վարձակալություն՝ որոշակի գումարի վճարումով»²⁸:

Տնտեսագիտական տերմինահամակարգում *արենդա* տերմինը բազմիմաստ է: Համաձայն 2-րդ իմաստի՝ տերմինի հայերեն համարժեքն է *վարձավճար* բառը:

4. Փոխառություններ, որոնք այլևս չեն գործածվում գրական լեզվում, զիջում են հայերեն համարժեք տարբերակներին՝ դառնալով օտարաբանություններ, ինչպես՝ *բիզնեսմեն – գործարար, բալանս – հաշվեկշիռ, բրենդ – սպրանքանիշ, վաուչեր – արժեթուղթ, մենեջեր – կառավարիչ, կոնտրաբանդ – մաքսանենգություն, ինվեստիցիա – ներդրում, ինվեստոր – ներդրող, ինվայուտա – արտարժույթ, ինդուստրիա – արդյունաբերություն, էկոնոմիկա – 1. տնտեսություն, 2. տնտեսագիտություն, էկոնոմիստ – տնտեսագետ, ինվենտարիզացիա – գույքագրում, սերտիֆիկացիա – հավաստագրում, պրեֆերենցիա – արտոնություն, նումիզմատիկա-դրամագիտություն, պանիկա – խուճապ* և այլն:

Տնտեսագիտական փոխառությունները տերմինահամակարգում ստեղծում են նաև տերմինային հականիշություն, ինչպես՝ *նետտո – բրուտտո, պրոֆիցիտ – դեֆիցիտ, ինֆյացիա – դեֆյացիա* բառազույգերը:

²⁸ *Ս. Հայրապետյան*, Օտար բառերի բառարան, Ե., 2011, էջեր 250, 69:

Եզրակացություններ:

1. Գիտությունների փոխկապակցված զարգացմամբ պայմանավորված՝ փոխառությունների մուտքը ցանկացած տերմինահամակարգ բնական է: Դրանց արտալեզվական և ներլեզվական զարգացումները խիստ սուբյեկտիվ են՝ կապված տվյալ երկրի աշխարհաքաղաքական հարաբերությունների, քաղաքակրթության զարգացվածության, լեզվակիրների լեզվամտածողության, բառակերտման և այլ առանձնահատկությունների հետ:

2. Տնտեսագիտական տերմինահամակարգը սերտորեն համագործակցում է հասարակական և բնական գիտությունների տերմինահամակարգերի հետ, որի հետևանքով ձևավորվում են միջգիտական և ընդհանուր տերմինահամակարգեր:

3. Ստուգաբանական քննության համաձայն՝ արդի հայերենի տնտեսագիտական փոխառությունները փոխանցվել են այն լեզուներից, որոնց կրողները իրենց՝ տնտեսագիտական առաջին մտքերով ու պատկերացումներով հիմնավոր դեր են խաղացել տնտեսագիտության՝ որպես առանձին գիտակարգի ձևավորման և կայացման գործում:

4. Խուսափելով լեզվում օտար բառերի կուտակումից՝ հայերեն համարժեք տարբերակներ կազմելու փորձեր են կատարվում, որոնցից ընտրվում են այն տարբերակները, որոնք հասարակության համար բարեհունչ են և լիարժեքորեն են արտահայտում հասկացության իմաստը:

Ключевые слова: экономический термин, заимствование, армянский эквивалентный вариант, общие и междисциплинарные терминосистемы, отрасли науки, терминологическая полисемия, терминологическая синонимия.

Карслян А. Р. - Лингвофункциональная характеристика заимствованных экономических терминов современного армянского языка. - Предметом исследования данной статьи являются заимствованные экономические термины современного армянского языка, большая часть которых представляет собой интернациональные

слова. Согласно этимологическому анализу заимствование терминов происходило из тех языков, на которых развивалась экономическая мысль и первые представления об экономике, а носители этих языков сыграли определенную роль в становлении и развитии экономики как отдельной дисциплины. В качестве социальной науки экономика тесно сотрудничает с общественными и естественными науками, в результате чего формируются междисциплинарные и общие терминосистемы. Во избежание скопления иностранных слов в языке, со временем делаются попытки создания армянских эквивалентов, из которых отбираются те варианты, которые являются благозвучными для общества и полностью передают все значения семантического поля того или иного понятия.

Keywords: economic term, borrowing, an equivalent Armenian version, general and interterm systems, scientific branches, term polysemy, term synonymy.

Gharslyan A. R. - Linguo-Functional Characteristics of Modern Armenian Borrowed Economic Terms. - The given article aims to study the borrowed economic terms of Modern Armenian, most of which are words of international significance. According to the etymological analysis, the borrowed terms were taken from those languages in which the first economic thoughts and ideas were expressed, the speakers of which had a significant role in the formation and establishment of economics as a separate discipline. Economics, as a social science, is in close cooperation with social and natural sciences, as a consequence of which interdisciplinary and general terminology systems are formed. Avoiding the accumulation of foreign words in the language, in the course of time attempts are being made to create equivalent versions in the Armenian language, among which are chosen the versions that are pleasant to the ear of the society and fully express the semantic field of the concept.

Natalia A. Kozintseva, Le parfait en arménien, Saint-Pétersbourg, Institut des études linguistiques, Académie des sciences de Russie, 2022, pp. 227.

Il est vrai que les études sur les questions de la langue arménienne développent en grande partie dans la République d'Arménie, de plus, rares sont les études approfondies et en format de monographie sur l'arménien qui voient le jour en dehors de l'Arménie. Bien qu'ils sont moins fréquents que l'on voudrait, il y a des cas où les linguistes s'attèlent aux études de la langue arménienne à l'étranger. Un bel exemple est le livre de Natalia A. Kozintseva «Le parfait en arménien» écrit en français et publié post mortem en Russie.

Natalia Kozintseva a entamé l'écriture de ce livre quand elle travaillait à l'Inalco et enseignait la linguistique dans la Licence d'arménien. Le livre était prêt pour la publication dans deux ans et demi, de plus, elle voulait que son livre soit publié en français et en France. Ce rêve ne se réalisera qu'après plus de dix ans, et le livre sera publié en français, mais en Russie.

Le livre «Le parfait en arménien» est composé d'une note de l'éditeur, d'une introduction, de cinq chapitres, d'une bibliographie, d'une note biographique sur l'auteur et d'une vaste liste de ses publications en différentes langues mais en général sur les questions concernant l'arménien.

Le livre porte sur l'arménien oriental et l'arménien ancien (grabar). Ici l'auteure étudie les marqueurs du parfait, leur sémantique et les spécificités de leur emploi dans divers contextes et les rapports du parfait avec les autres forms du système aspecto-temporel du verbe de l'arménien.

Kozintseva indique bien les auteurs qui ont lui inspiré d'entreprendre une telle étude sur le parfait en arménien. On peut remarquer, et d'ailleurs l'auteure reconnaît elle-même le rôle d'Emile Benveniste et de ses recherches sur la linguistique générale sur ses recherches à elle, il faut aussi souligner qu'elle s'est inspirée des classifications des verbes et des prédicats de Zeno Vendler et de Tatyana Bulygina.

Il est aussi à noter que même si le livre porte sur le parfait en arménien, Kozintseva l'ouvre par la description du problème dans la linguistique générale et puis elle localise les faits linguistiques sur le français, l'allemand, le russe, l'anglais et l'arménien.

Tout au long du livre, Kozintseva établit des parallèles entre les constructions et l'utilisation du parfait en arménien et en français, ce qui fait du livre une étude importante non seulement du point de vue de la linguistique arménienne, mais aussi du point de vue de la linguistique contrastive lié à l'emploi du parfait en arménien (mais sans préciser de quel arménien il s'agit) et en français, qui s'appuient sur des exemples translittérés tirés de la langue arménienne et avec leurs traductions en français.

Une étude aussi approfondie de la langue arménienne d'un point de vue différent est toujours bien accueillie par les linguistes qui mènent des recherches sur la langue arménienne. Et pourtant la valeur d'un tel ouvrage est d'autant plus grande qu'il est écrit dans une langue étrangère, en français, qui est l'une des langues socio-politiquement et culturellement dominantes sur l'échelle mondiale. Ce qui fait que des œuvres pareilles peuvent ouvrir les portes des études de la linguistique arménienne aux linguistes du monde entier.

M. S. Mkrtchyan
Jeune chercheur, Institut linguistique
NAS RA

Արամ Հայրապետյանի «Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին» աշխատությունը

Արամ Հայրապետյանի «Ագուլիս» հրատարակչությունում 2022 թ. տպագրված աշխատությունը հրաշալի անակնկալ է, և միաժամանակ, առաջընթացի խոստում է հայ լեզվաբանության և հաղորդակցման գիտության նորարարական զարգացման համար, մասնավորապես, հայերենով թվային հաղորդակցման ոլորտի գիտնականների, ծրագրավորողների և կրթական ծրագրեր կազմող մասնագետների համար, որովհետև լայն առումով, այն լեզվի թվային մշակումով զբաղվող մասնագետներին է հրամցում ժամանակակից հայոց լեզվի ձևայնացման և իմաստային կադապարման մինչև այժմ չեղած տեղեկատու ձեռնարկը:

Բնական խոսքի կադապարման միտումներն սկիզբ են առել դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին, և արդի լեզվաբանության մեջ մեծ տեղ են զբաղեցնում: Դա պատճառաբանված է նախ թվային տեխնոլոգիաների զարգացմամբ ու տարածումով, ապա՝ բնական խոսքի թվայնացման և տեքստերի մշակման տարանպատակ խնդիրներով: Ընդհանրական ներկայացումը կամ մոդելավորումը հնարավորություն է տալիս միևնույն սկզբունքներով ներկայացված տարբեր լեզուներ ներառել մեկ հաղորդակցական համակարգում, դրանք փոխադարձաբար թարգմանելի դարձնել մեքենայական միջոցներով: Մյուս կողմից, ցանկացած օբյեկտի գիտական տեսականացումն ինքնին հանգում է կադապարման գաղափարին, և այդ առումով առաջ է քաշում համընդհանուր տրամաբանական եզրահանգումներ:

Շատ հեռու չգնալու համար, որպես օրինակ հիշենք Գևորգ Ջահուկյանի համընդհանուր լեզվի տեսությունը, որն իր վաղ և ուշ տարբերակներով հրատարակվել է առնվազն երկու անգամ, արտացոլելով գիտնականի ընդհանուր լեզվաբանական հայացքները: Թեև իր ժամանակին լեզվի թվայնացման հնարավորությունները դեռևս բավականաչափ տարածված չէին, նման աշխատություններ

րը չեն մոռացվում: Ուստի, զարմանալի չէ, որ Ա. Հայրապետյանի աշխատության մեջ էլ է հիշատակված Գ. Ջահուկյանի տեսությունը. այն սերմի նման վերածնվել և իր զարգացումն է ստացել այս նոր սերնդի աշխատության մեջ: Կարծում ենք, որ այս առումով, գրախոսվող աշխատությունն իր գիտական նախադրյալներն ունեցող հաջողված աշխատություն է:

Հեղինակը նշում է, որ գիրքը արևելահայերեն լեզվի՝ թվային գործածության համար հասանելի ձևայնացման համալիր՝ «ծառի տեսքով» կադապարված ներկայացում է:

Առաջարկված կադապարը հնարավորություն է տալիս մշակելու հայերեն լեզվական միավորների հիմքատման, պիտակավորման, լեմմավորման ալգորիթմները, որոնք իրենց կիրառվում են բնական լեզվի պարունակած տեղեկության և գիտելիքի հետ աշխատելու տարբեր նպատակներով:

Ա. Հայրապետյանն իր աշխատության մեջ լեզվի թվային մեկնաբանությամբ զբաղվող մասնագետների և պարզապես, հետաքրքրվողների համար բացատրում է մի շարք կարևոր հասկացություններ և եզրեր խոսքային հաղորդակցման և հոգելեզվաբանության, իմաստաբանության ոլորտներից: Այդպիսի հասկացական հարաբերություններ են ուղերձի իմաստի ձևավորումն ու բովանդակության քերականական կողավորումը: Ներկայացված է նաև արհեստական բանականության՝ ներյոնային ցանցերով խորքային ուսուցման հակիրճ տեսությունը, այն լուսաբանելով ցանցերի ճարտարապետության՝ հաջորդականությունից հաջորդականություն կառուցելու օրինակով:

Առաջարկված կադապարումը թույլ է տալիս նաև մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ կիրառել խոսքի ֆորմալ մշակումների և տեղեկույթի վերլուծության, գիտելիքի զտման նպատակներով:

Գրքի բովանդակության կառուցվածքի համառոտ նկարագիրը հեղինակը սովել է «երկու խոսք»-ով: Նկատենք, որ գիրքը կառուցված է լեզվաբանական բազային կրթություն ունեցողի համար

մատչելի կերպով, մի բան, որ ավելի է մեծանում նրա արժեքը բնական լեզվի մշակման մյուս՝ մաթեմատիկական հասկացական հիմքով կազմված ձեռնարկների համեմատությամբ:

Ներածական բաժնում հաղորդակցական կադապարման տեսանկյունից հակիրճ ներկայացված են մտքի և խոսքի միավորների ու հարաբերության տեսակները:

Այնուհետև, նույնպես սեղմ կերպով, տրված են խոսքային կադապարի գաղափարն ու միավորները: Դրանց հաջորդում են լեզվի բառաձևերի՝ արդեն ծավալուն նկարագրությունները՝ ձևաբանական, խոսքիմասային և բառակազմական կադապարման հարաբերությունների մեջ: Ձևաբանությունն ամփոփող բաժնից հետո ընթերցողին է տրամադրվում եզրերի բառադարան, տեքստի հարացուցային ծառն իբրև նկարագրության տարբերակ:

Տասնմեկերորդ և տասներկուերորդ բաժինները անմիջականորեն նվիրված են բառաձևերի հիմքատման, լեմմավորման և նախադասության վերլուծության ու ձևայնացման խնդիրներին:

Կրկին անդրադառնալով մտավոր գործունեությանը, հեղինակը դիտարկում է դրա բարդ և ոչ միանշանակ խոսքային դրսևորումների խնդիրն:

Գրքի գրեթե կեսը կազմում է պիտակների տեղեկատու հավելվածը: Սակայն մինչ այդ, ուսանողներին և ոչ մասնագետ ընթերցողին ներկայացվում են բնական լեզվի այսօրինակ մշակման կիրառական ոլորտները՝ բառաշտեմարաններ, կորպուսներ, սրբագրման համակարգ, որոնող շարժիչներ, հանրագիտարան, թարգմանություն, ի վերջո, լեզվաբանի, և ավելացնենք՝ լեզվուսուցման աշխատանոց:

Ոչ պակաս կարևոր հանգամանք է այն, որ հեղինակի խոսքն աչքի է ընկնում հակիրճ և հստակ ոճով, մի կոնկրետություն, որն անհրաժեշտ է կիրառական խնդիրների արդյունավետ լուծումներ որոնելիս:

Կարծում եմ, որ հումանիտար և սոցիալական ոլորտի համընդհանուր թվայնացման պայմաններում, սա արդեն իսկ լավ

սկիզբ է նախկինում հայերենով նման աշխատություն չունեցող մեր գիտական և մասնագիտական հանրության համար: Մասնավորապես, գիրքը կարող է դասագրքային և քրեստոմատիկ-տեղեկատվական նշանակություն ունենալ բուհում «Հաշվողական լեզվաբանություն» կրթական ծրագրի իրականացման ժամանակ, ինչպես նաև կորպուսային լեզվաբանության և արհեստական լեզվախոսքի ծրագրավորման հարցերով զբաղվողների համար:

**Բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր
Գայանե Ռ. Հովհաննիսյան**

Վ. Գ. Համբարձումյան, «Հայերենի բառաքնություն և ստուգաբանություն», Երևան, 2022, 192 էջ:

Երկար տարիներ է՝ բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյանը հայերենի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ է կատարում: Հայտնի է, որ ստուգաբանության ուսումնասիրման առարկան բառն է, ձևայիններն ու քերականական ձևերը, նրանց պատմությունը, ինչպես նաև լեզվաբանական միավորների նախնական իմաստներն ու զարգացումը: Լեզվաբանության այդ բաժնին վերաբերող սույն գրքում ներկայացվում են մի քանի տասնյակ բառերի լեզվաբանական բնույթի գիտական քննություն և ստուգաբանություններ, որոնք աղերսներ ունեն ավանդական և նոր ժամանակների բնութագրումների հետ: Վ. Համբարձումյանը արդիական նպատակ է հետապնդում. տարբեր տարիների ուսումնասիրությունները համալրել ճշգրտված և նորացված փաստերով, որոնք կարելի է օգտագործել բառաքնական և ստուգաբանական նոր բառարանի մեջ:

Գիրքն ունի առաջաբան և վեց խոսույն վերնագրեր՝ 1. Հնդեվրոպական արմատի զրո աստիճանի ձայնավորման արտացոլումը հայերենում, 2. Հայերենի տվյալների կարևորությունը հնդեվրոպասեմական առնչությունների ուսումնասիրման մեջ, 3. Հնչյունական և բառաքերականական զուգադիպումների համեմատական-տիպաբանական քննություն, 4. Ստուգաբանական դիտարկումներ, 5. Բառաիմաստային և ստուգաբանական քննություն, 6. Մի քանի այլ ստուգաբանություններ:

Գ. Նարեկացու բառագանձից ստուգաբանական դիտարկումների են ենթարկվում *գանձ*, *գիլ*, *տաղ* բառերը, իսկ ստուգաբանությունների շարքում այդպիսիք 14-ն են՝ *ալարուլա*, *գալ*, *գաղգաղ*, *գեղ*, *գուարակ*, *ծամ*, *կաշառ* և այլն: Հեղինակը հանգամանորեն

անդրադարձ է կատարում հնչյունական, մանավանդ բաղաձայնական համակարգերի, արմատների այնպիսի հնագույն գծերին, որոնք համեմատաբար ավելի մոտ են հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնող նախատիպին:

Գրքում հայերենի համեմատական-տիպաբանական և համեմատական-ստուգաբանական ուսումնասիրությունները կատարվում են օրինակելի մեթոդաբանության գործադրմամբ: Քննության օբյեկտիվ ընթացք են ունենում լեզվական միավորների հին, ավանդական և նոր տարրերը, իսկ նախկինում չստուգաբանված կամ ոչ հավաստի ստուգաբանությունների համար առաջարկվում է առավել համոզիչ և հիմնավոր մեկնաբանություն, իրականացվում են լրացումներ և ճշգրտումներ: Առաջադիր միավորները բազմակողմանի բնութագրման են ենթարկվում հատկապես բանավիճային դրույթների բախման գործընթացում: Վ. Համբարձումյանը բազմաթիվ լեզուներով քաղված տվյալներով արձագանքում է առկա տվյալներին և որոշակի հիմունքով շրջանառում նոր վարկած: Վեճը ծագում է մի կողմից հնդեվրոպացիների (նաև հայերի, իտերերի, արիացիների), մյուս կողմից՝ սեմական, քարթվելական և այլ ժողովուրդների բնակավայրերի, հետևապես լեզվական շփումների հարցերին. տարակարծությունները ակադ. Գ. Ջահուկյանի և հակադիր թևի մասնագետների միջև է: Շրջանառվում են փոխառյալ արմատներ՝ զուգորդվելով հայերեն-լատիներեն նշագծումով:

Քաջատեղյակ լինելով այս ամենին՝ գրքի հեղինակը կարևորում է հնդեվրոպականից սեմականին անցումը դիտել որպես հատուկ քննության՝ ներկայացնելով այլալեզու դիպուկ կիրառություններ:

«Հայերենի բառաքննություն և ստուգաբանություն» գրքում լեզվաբանական էական խնդիրներ են շոշափվում և ուշագրավ բնութագրումներ տրվում: Կարևորվում է, որ դասական համեմատաբանությունից հետո հայերենի տվյալները քննվում էին սովորական ձևով, սակայն նորագույն ուսումնասիրությունները պարզում են, որ հայերենի փաստական նյութը, հատկապես հնչյունա-

բանության, իմաստաբանության և ստուգաբանության առումով ունի կարևոր և վճռորոշ նշանակություն:

Գիտական հարթ ճանապարհ մաղթենք սույն ժողովածուին և սպասենք երկրորդ պրակի լույս ընծայմանը:

Գիրքը կարող է օգտակար լինել համեմատական լեզվաբանության մասնագետներին, հայերենով հետաքրքրվող լայն շրջաններին:

*
* *

Վերջին տասնամյակի իր գիտական արդյունքները ի մի բերելու, դրանք հանրությանը և հատկապես բարբառագետների ու բարբառներով հետաքրքրվողների ներկա ու հաջորդ սերունդներին ամփոփ կերպով ներկայացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Բարբառագիտական հետազոտություններ» ժողովածուների շարք՝ ըստ տարիների:

Էլեկտրոնային եղանակով հրապարակվել է շարքի առաջին պրակը: Այն պարունակում է բաժնի աշխատակիցներ Ա.Աբրահամյանի, Մ. Աղաբեկյանի, Ջ. Բառնասյանի, Գ. Գևորգյանի, Հ. Խաչատրյանի, Վ. Կատվայանի, Հ. Մեսրոպյանի, Ժ. Միքայելյանի, Ս. Միքայելյանի, Գ. Մկրտչյանի աշխատանքները, որոնք 2013 թ. լույս են տեսել տարբեր հանդեսներում, ժողովածուներում, գրքերում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի հնչյունաբանության, բառապաշարի ու ձևաբանության ոլորտներում կատարված հետազոտությունների արդյունքներ, զուգադրահամեմատական բարբառագիտությանն առնչվող հարցեր:

*
* *
*

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը տասնամյակներ շարունակ անդրադարձել է լեզվի պատմության և համեմատական ուսումնասիրության տարբեր խնդիրների: Բուն ուշադրության առարկա են եղել ոչ միայն հայերենի նոր փաստերի վերհանումն ու նկարագրությունը, այլև լեզվի զարգացման ընթացքին բնորոշ փոխազդեցություններն ու առանձին փոփոխությունները: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են տասնյակ մենագրություններում, միջազգային գիտական ժողովածուներում, հարյուրավոր հոդվածներում ու զեկուցումներում:

Գիտական արդյունքներն ամփոփելու, հանրությանը և հատկապես հայոց լեզվի պատմության հարցերով հետաքրքրվողներին ներկայացնելու նպատակով հայոց լեզվի պատմության բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումներն ընդգրկող «Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր» նոր ժողովածուն՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած հանդեսներից ու պարբերականներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Սույն պրակն ընդգրկում է բաժնի աշխատակիցներ Լ. Հովհաննիսյանի, Գ. Մխիթարյանի, Ս. Գրիգորյանի, Հ. Թադևոսյանի, Վ. Խաչատրյանի, Օ. Խաչատրյանի ուսումնասիրությունները, որոնք 2013 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են հայերենի զարգացման փուլերի լեզվական իրադրության բնութագրումների, լեզվական որոշ փոփոխությունների բնույթն ու պատճառները բացահայտելուն, հայերենի քերականական կառուցվածքի, բառապաշարի պատմական զարգացման որոշակի առանձնահատկությունների պարզաբանմանը:

*
* *

Լույս է տեսել «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկագիրք - 2021» գիրքը, որն ընդհանուր գծերով ներկայացնում է 2021 թ. ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների: Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետների, լեզվաբանությամբ հետաքրքրվողների, գիտական լայն հանրության համար:

*
* *

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը գիտական արդյունքներն ամփոփելու նպատակով սկսել է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները ամփոփող «Կիրառական լեզվաբանության հարցեր» ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Առաջին պրակը ընդգրկում է Գ. Գրիգորյանի, Հ. Հովհաննիսյանի, Լ. Հովսեփյանի, Ս. Ղուկասյանի, Ա. Մանուկյանի աշխատանքները, որոնք 2013-15 թթ. հրապարակվել են տարբեր հանդեսներում և ժողովածուներում: Նյութերը քաղված են լույս տեսած հանդեսներից առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Տարիներ ի վեր մեր ամսագրի էջերում լայն լուսաբանության են արժանանում ինստիտուտի գիտական կյանքին վերաբերող կարևոր միջոցառումներ, որոնք մի տեսակ ամփոփումն են այդ հաստատության տարեկան գիտահրատարակչական լայն գործունեության: Այս համարում ևս ներկայացնում ենք նման միջոցառումներից մի քանիսը:

05/04/2022

Ապրիլի 4-ին կայացավ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հերթական նիստը:

Հայ բարբառների բառապաշարի իմաստային, ծագումնաբանական, բառակազմական իրողությունների քննությամբ զբաղվող գիտաշխատողները տեղեկություններ հաղորդեցին իրենց ուսումնասիրությունների ընթացքի մասին՝ առաջիկա գիտաժողովներում արդյունքների շուրջ զեկուցումներով հանդես գալու առաջարկով: Հետագայում կայանալիք նիս-

տերի ժամանակ բաժնի աշխատակիցները կքննարկեն այդ թեմաները: Ճշգրտվեց նաև «Հայ բարբառագիտություն» ակադեմիական աշխատության ստեղծմանն ուղղված բառահողվածները ներկայացնելու ժամանակացույցը:

26/04/2022

Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հերթական նիստում բաժնի աշխատակից Միեր Քումունցը ներկայացրեց Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում երկրագործության բնագավառին առնչվող բառանվանումների մի խմբի բառաքննական և ստուգաբանական հետաքրքիր աշխատանք:

Քննարկմանը մասնակցեց համեմատական լեզվաբանության բնագավառում փորձառու մասնագետ Նեկտար Միմոնյանը: Նա արժեքավոր դիտողություններ արեց՝ աշխատանքն առավել անթերի տեսնելու ցանկությամբ:

07/06/2022

Ս. թ. հունիսի 7-ին տեղի ունեցավ հայոց լեզվի պատմության և բարբառագիտության բաժինների համատեղ քննարկում: Արժարձվեցին լեզվի զարգացման ընթացքում բարբառային իրողությունների դրսևորումներին առնչվող հարցեր: Անդրադարձ եղավ Աստվածաշնչի լեզվական յուրահատկություններին, ընդգծվեց Աստվածաշնչի լեզվի համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Բաժինները որոշեցին համադրել իրենց ջանքերը հիշյալ ուղղություններով ուսումնասիրություններ կատարելիս:

01/08/2022

Ս.թ. հուլիսի 28-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ հանդիպում Ֆրանսիայի Արելեյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (ԻՆԱԼԿՕ) բակալավրիատի կրթության տնօրեն, Հայկական լեզվական ժառանգության թվայնացման նախագծի ղեկավար, դոցենտ Վիկ-

տորյա Խուրշուդյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էին ինստիտուտի բարբառագիտության և հայոց լեզվի պատմության բաժինների աշխատակիցներ:

Հանդիպման ընթացքում ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Կատվայանը և հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Մխիթարյանը խոսեցին ինստիտուտում իրականացվող աշխատանքների և ծրագրերի մասին, իսկ Վիկտորյա Խուրշուդյանը ներկայացրեց Հայկական լեզվական ժառանգության թվայնացման նախագծի շրջանակներում ընթացող աշխատանքները: Քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, ճշգրտվեցին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և ԻՆԱԼԿՕ-ի գործակցության շրջանակներն ու հնարավորությունները, ձեռք բերվեցին գործնական պայմանավորվածություններ՝ իրականացնելու

համատեղ հետազոտություններ և ծրագրեր հայերենագիտության ոլորտում:

03/10/2022

2022թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հերթական նիստը, որին մասնակցում էին բաժնի վարիչ Վ.Կատվայանը, Գ.Գևորգյանը, Ջ.Բառնասյանը, Հ.Մեսրոպյանը, Ա.Վարդանյանը, Մ.Քումունցը, Ա.Մկրտումյանը, Մ.Խառատյանը, Ն.Սահակյանը:

Օրակարգում Արտակ Վարդանյանի նոր հոդվածի քննարկումն էր և բաժնի աշխատակիցների տարեկան պլանային աշխատանքների ընթացքի մասին տեղեկություններ (մասնակցություն հանրապետական և միջազգային կարգի գիտաժողովներին, գիտական հոդվածներ ու մենագրություններ և այլն):

12/10/2022

2022 թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ԳԱԱ Հ. ԱՃառ-

յանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հերթական նիստը, որին մասնակցում էին բաժնի վարիչ Վ.Կատվայանը, Ա.Վարդանյանը, Ջ.Բառնասյանը, Հ.Մեսրոպյանը, Ա.Մկրտումյանը, Մ.Խառատյանը, Ն.Սահակյանը: Հյուրի կարգավիճակում էր 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախի Հանրության շրջանի Մեծ թաղեր գյուղից բռնագաղթած և Երևանում ապաստանած Նաիրե Ոսկանյանը: Հուզիչ էր արցախցի հայուհու ողիսականը. հայկական հնամենի բնակավայրը անսպասելիորեն ուժեղացվեց, ահավոր խուճապի պայմաններում փրկվեցին միայն փախչելու հնարավորություն ունեցողները: Նաիրեն, իր ընտանիքով ապաստանելով Երևանում, բուժքրոջ աշխատանքին զուգահեռ՝ մտադրվեց փրկել իր մայրենի Հանրության բարբառից պատառիկներ՝ նյութեր գրառելով նաև համագյուղացիներից: Իսկ իր հավաքած նյութերի գրառումների որակը և գիտական տառադարձումները ճշգրտելու նպատակով դիմել էր շատ

ճիշտ հասցեով՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի փորձառու գիտաշխատողներին: Բաժնի նիստում որոշեցին հնարավորինս օգտակար լինել և նպաստել այդ շատ կարևոր նախաձեռնության իրականացմանը: Նաիրեն խոստացավ ըստ ՀԲԱ ծրագրի կատարել համապատասխան գրանցումներ՝ օգտվելով գիտաշխատողների խորհրդատվությունից:

24/10/2022

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նախաձեռնել է «Բարբառագիտական ընթերցումներ» խորագրով գիտաժողովների շարք՝ նպատակ ունենալով առանձին-առանձին անդրադառնալու հայերենի 11 բարբառախմբերից յուրաքանչյուրին:

Ս.թ. հոկտեմբերի 20-21-ին ինստիտուտում տեղի ունեցավ շարքի առաջին գիտաժողովը՝ «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» խորագրով: Միջազգային

գիտաժողովին, որ համատեղ կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը և Արցախի պետական համալսարանը, իրենց մասնակցությունը բերեցին ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտների, բուհերի, Արցախի պետական համալսարանի հետազոտողներ, հայագետներ Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Նիդեռլանդներից: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը բարբառները որակեց իբրև լեզվի կենդանի, բնական գոյավիճակներ, որոնց համակողմանի հետազոտությունը մեծ կարևորություն ունի ինչպես լեզվի պատմության, այնպես էլ արդի գործառության շատ հարցեր պարզաբանելու առումով: Արցախի պետական համալսարանի ռեկտոր Ա. Սարգսյանը իր ողջունի խոսքում անդրադարձավ միջբարբառախմբի կազմում ընդգրկված բարբառային միավորների առջև ծառայած գոյապահպանական մարտահրա-

վերներին, ուսումնասիրության արդի խնդիրներին: Ելույթներ ունեցան և բարբառային հայերենի ուսումնասիրությունը կարևորեցին «Հայկական հանրագիտարան» հրատարակչության տնօրեն Հ. Այվազյանը, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վ. Դևրիկյանը, Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտի հայագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ա. Տոնապետյան-Դեմոպուլոսը, Լեյդենի համալսարանի դասախոս Հ. Մարտիրոսյանը, ֆրանսիացի հայագետ Ա. Միքայելյանը, Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղից բնագաղթված Նաիրե Ոսկանյանը: Գիտական զեկուցումներում անդրադարձներ եղան Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության պատմությանը (Ա. Յու. Սարգսյան), Արցախի տեղանվանական համակարգին (Լ. Հովհաննիսյան, Լ. Սարգսյան, Ս. Մինասյան), բարբառների հնչունական համակարգին (Լ. Վանյան), բառապաշարին (Շ. Մինասյան, Ս.

Գրիգորյան, Ա. Արզումանյան, Մ. Քումունց, Է. Ալթունյան), քերականական իրողություններին (Գ. Գևորգյան, Ջ. Բառնասյան), առանձին բարբառային միավորների (Վ. Կատվալյան, Հ. Արզումանյան, Մ. Քումունց, Հոջոն Քեթրին Ջերեմի, Հ. Խաչատրյան): Հնչեցին նաև զեկուցումներ՝ նվիրված բարբառային փոխազդեցություններին (Ա. Շ. Սարգսյան, Ա. Վարդանյան) ու այլ լեզուների հետ որոշ ընդհանրություններին (Լ. Ստեփանյան), բանահյուսական ու գեղարվեստական նյութերում բարբառային իրողությունների արտահայտություններին (Թ. Հայրապետյան, Ս. Մինասյան): Գիտաժողովի մասնակիցները իրենց զորակցությունը հայտնեցին արցախահայությանը, անդրադարձան տարածաշրջանի բարբառային միավորների առջև ծառայած գոյապահպանական խնդիրներին՝ ցավով արձանագրելով մի շարք բարբառների ու խոսվածքների կորստյան փաստը:

24/10/2022

Ս.թ. հոկտեմբերի 13-14-ին

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ հայերենագիտական գիտաժողով՝ նվիրված նշանավոր հայերենագետներ Ռ.Իշխանյանի և Ա.Սուքիասյանի 100-ամյա հոբելյաններին: Գիտաժողովի մասնակիցներին ուղղված ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս - քարտուղար Յու.Սուվարյանը ընդգծեց հայագիտության երախտավորներին նվիրված միջոցառումների կարևորությունը, գիտնականների երիտասարդ սերնդին հայերենագիտության ձեռքբերումների ըստ արժանվույն ներկայացումը, որը կարող է ամուր հիմք լինել ոլորտի զարգացման և առաջընթացի համար՝ գուգորդվելով լեզվաբանական ուսումնասիրությունների նորագույն ուղղությունների և եղանակների հետ: Գիտնականների վաստակին անդրադարձան և հուշեր պատմեցին «Հայկական հանրագիտարան» հրատարակչության տնօրեն Հ. Այվազյանը, մանկավարժական

համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա.Գալստյանը, Ռ.Իշխանյանին և Ա.Սուքիասյանին աշակերտած, նաև նրանց գործընկերը դարձած գիտաշխատողներ: Լայն ու ընդգրկուն էր գիտաժողովի թեմատիկան. հնչեցին ժամանակակից գրական հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) քերականական համակարգին (հատկապես շարահյուսությանը), բառապաշարին (նորակազմ բառեր, դարձվածքներ, փոխառություններ, բառարաններ), տառադարձության հարցերին, առանձին բառերի ստուգաբանությանը, արևմտահայերենի պահպանության խնդիրներին նվիրված զեկուցումներ, անդրադարձ եղավ Աստվածաշնչի լեզվի որոշ իրողությունների՝ մեկնաբանություններում օգտագործելով հունարեն բնագրերի տվյալները:

10/11/2022

Գիտության համաշխարհային օրվա առիթով ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը կազմակերպեց բաց

դռների օր: ԵՊՀ հոգեբանության ֆակուլտետի երկրորդ և երրորդ կուրսի մի խումբ ուսանողներ հյուրընկալվեցին ինստիտուտի տնօրենի աշխատասենյակում: Հանդիպմանը մասնակցում էին լեզվի պատմաբաններ, բարբառագետներ, գրական արևելահայերենի ու արևմտահայերենի հետազոտողներ: Ուսանողները հարցեր ուղղեցին լեզվաբաններին արդի գիտական ուղղությունների մասին, կարծիքներ փոխանակեցին հոգեբանության տեղն ու դերն այլ գիտակարգերի մեջ ընդլայնելու անհրաժեշտության հարցի շուրջ: Երկուստեք ընդգծվեց մայրենի լեզվին կատարելապես տիրապետելու անհրաժեշտությունը գիտական ցանկացած բնագավառում: Գեղարվեստական գրականության գոհարներն իրենց ընտրած մասնագիտության տեսանկյունից դիտարկելու անհրաժեշտությունը գիտնականների շուրթերից հնչեց որպես պատգամ և ուղերձ ապագա հոգեբաններին: Որպես նվիրյալ գիտնականի օրինակ՝ ներկայացվեց ակադ. Գ. Ջա-

հուկյանի գիտական գործունեությունը: Գիտնականներն անդրադարձան նաև արդի դարաշրջանին հատուկ՝ համաշխարհայնացման գերխնդրին:

Հանդիպումը երկուստեք հետաքրքիր էր և բովանդակալից: Իսկ Գիտության համաշխարհային օրը լավ առիթ էր վատակաշատ գիտնականների և ապագա մասնագետների հանդիպման և կարծիքներ փոխանակելու համար:

11/11/2022

Վերջին տասնամյակի իր գիտական արդյունքները ի մի բերելու, դրանք հանրությանը և հատկապես բարբառագետների ու բարբառներով հետաքրքրվողների ներկա ու հաջորդ սերունդներին ամփոփ կերպով ներկայացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Բարբառագիտական հետազոտություններ» ժողովածուների շարք՝ ըստ տարիների:

Էլեկտրոնային եղանակով հրապարակվել է շարքի առաջին պրակը: Այն պարունակում է բաժնի աշխատակիցներ Ա. Աբրահամյանի, Մ. Աղաբեկյանի, Ջ. Բառնասյանի, Գ. Գևորգյանի, Հ.Խաչատրյանի, Վ. Կատվայանի, Հ. Մեսրոպյանի, Ժ. Միքայելյանի, Ս. Միքայելյանի, Գ. Մկրտչյանի աշխատանքները, որոնք 2013 թ. լույս են տեսել տարբեր հանդեսներում, ժողովածուներում, գրքերում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի հնչյունաբանության, բառապաշարի ու ձևաբանության ուղղորտներում կատարված հետազոտությունների արդյունքներ, զուգադրահամեմատական բարբառագիտությանն առնչվող հարցեր:

28/11/2022

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը տասնամյակներ շարունակ անդրադարձել է լեզվի պատ-

մության և համեմատական ուսումնասիրության տարբեր խնդիրների: Բուն ուշադրության առարկա են եղել ոչ միայն հայերենի նոր փաստերի վերհանումն ու նկարագրությունը, այլև լեզվի զարգացման ընթացքին բնորոշ փոխազդեցություններն ու առանձին փոփոխությունները: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են տասնյակ մենագրություններում, միջազգային գիտական ժողովածուներում, հարյուրավոր հոդվածներում ու զեկուցումներում:

Գիտական արդյունքներն ամփոփելու, հանրությանը և հատկապես հայոց լեզվի պատմության հարցերով հետաքրքրվողներին ներկայացնելու նպատակով հայոց լեզվի պատմության բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումներն ընդգրկող «Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր» նոր ժողովածուն՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած հանդեսներից ու պարբերականներից՝ առանց հեղինա-

կային կամ խմբագրական միջամտության:

Սույն պրակը ընդգրկում է բաժնի աշխատակիցներ Լ. Հովհաննիսյանի, Գ. Մխիթարյանի, Ս. Գրիգորյանի, Հ. Թադևոսյանի, Վ. Խաչատրյանի, Օ. Խաչատրյանի ուսումնասիրությունները, որոնք 2013 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են հայերենի զարգացման փուլերի լեզվական իրադրության բնութագրումների, լեզվական որոշ փոփոխությունների բնույթն ու պատճառները բացահայտելուն, հայերենի քերականական կառուցվածքի, բառապաշարի պատմական զարգացման որոշակի առանձնահատկությունների պարզաբանմանը:

01/12/2022

Լույս է տեսել «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկագիրք- 2021» գիրքը, որն ընդհանուր գծերով ներկայացնում է 2021 թ. ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գի-

տական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների: Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետների, լեզվաբանությամբ հետաքրքրվողների, գիտական լայն հանրության համար:

08/12/2022

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը գիտական արդյունքներն ամփոփելու նպատակով սկսել է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները ամփոփող «Կիրառական լեզվաբանության հարցեր» ժողովածուների շարք՝ ըստ տարիների: Առաջին պրակը ընդգրկում է Գ.Գրիգորյանի, Հ. Հովհաննիսյանի, Լ. Հովսեփյանի, Ս. Ղուկասյանի, Ա. Մանուկյանի աշխատանքները, որոնք 2013-15թթ. Հրապարակվել են տարբեր հանդեսներում

և ժողովածուներում: Նյութերը
քաղված են լույս տեսած հան-
դեսներից առանց հեղինակա-

յին կամ խմբագրական միջա-
մտության:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

Վ. Գ. Համբարձումյան, Հայերեն ստուգաբանություններ..... 3
Ա. Վ. Գալստյան, Նոր շրջանի նամականու լեզվաբանական առանձնահատկությունների մասին..... 8
Հ. Զ. Ղազարյան, «Ընկալում, կարծիք, վերաբերմունք» արտահայտող դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում..... 17

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Ե Վ Ք Ն Ն Ա Ր Կ Ո Ւ Մ

Լ. Գ. Բրուտյան, Հաճոյախոսությունները միջմշակութային հաղորդակցման համատեքստում 32
Տ. Ղ. Սիրունյան, Ձեռագիր քերականության մի «Լուծմունքի» ուսումնասիրություն (ԺԵ դար)..... 42

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ Ն Ե Ր

Ա. Ռ. Ղարսյան, Արդի հայերենի տնտեսագիտական փոխառյալ տերմինների գործառական բնութագիրը..... 54

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

M. S. Mkrtchyan, *Natalia A. Kozintseva*, *Le parfait en arménien*, Saint-Petersbourg, Institut des études linguistiques, Académie des sciences de Russie, 2022, pp. 227..... 70
Գ. Ռ. Հովհաննիսյան, Արամ Հայրապետյանի «Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին» աշխատությունը 72
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ..... 76
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ..... 81

СОДЕРЖАНИЕ

С т а т ь и: *В. Г. Амбарцумян* - Армянские этимологии -3. *А. В. Галстян* - О некоторых лингвистических аспектах письма нового времени -8. *А.З. Казарян* - Фразеологизмы, выражающие восприятие, отношение и мнение в армянском, русском и английском языках. – 17. **Д и с к у с с и и о б с у ж д е н и я:** *Л.Г. Брутян*. - Compliments in the context of intercultural communication. – 32. *Т. Г. Сирунян* – Исследование одной грамматической рукописи (XV век) -42. **С о о б щ е н и я:** *А. Р. Карслян* - Лингвофункциональная характеристика заимствованных экономических терминов современного армянского языка – 54. **Р е ц е н з и я** – 70. **К н и ж н о е о б о з р е н и е** - 76. **Н а у ч н а я ж и з н ь** - 81.

C O N T E N T S

Articles: *V. G. Hambarzumyan* - Armenian Etymologies – 3. *A. V. Galstyan* - On Certain Linguistic Aspects of Letter writing Of the New Period -8. *A.Z. Ghazaryan* - Phraseological Units Expressing Perception, Attitude and Opinion in Armenian, Russian and English. – 17. **D i s c u s s i o n:** *L. G. Brutian* - Compliments in the Context of Intercultural Communication. – 32. *T. Gh. Sirunyan* - A study of one grammatical manuscript (XV century) – 42. **R e p o r t s.** *A. R. Gharslyan* - Linguo-Functional Characteristics of Modern Armenian Borrowed Economic Terms – 54. **R e v i e w** - 70. **B o o k r e v i e w s**- 76. **S c i e n c e N e w s**- 81.

Ի Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Գայքեջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ lezu.lezvabanutyun@gmail.com

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003г.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: lezu.lezvabanutyun@gmail.com

A C K N O W L E D G E M E N T

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yerevan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: lezu.lezvabanutyun@gmail.com

ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ

LANGUAGE AND LINGUISTICS

2(27)

2022

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Ն. Խառատյանի

Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի

Հրատ. պատվեր № 1061
Ստորագրված է տպագրության՝
Չափսը՝ 60x84^{1/16} տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: